ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶԱՏԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳԻ

ԿԱՐԻՆԻ (ԷՐԶՐՈՒՄԻ) ՆԱՀԱՆԳԸ
XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Մինասյան Է.Գ.
պատմական գիտությունների դոկտոր Ներսիսյան Ա.Ա.
պատմական գիտությունների դոկտոր Գևորգյան Հ.Մ.

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. մարտի 9-ին, ժամը 14.00-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունվարի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ ՄՈՒՐԱԴՅԱՆ Հ. Ղ.

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի երկրորդ կեսը բախտորոշ ժամանակահատված էր արևմտահայության պատմության մեջ: Օսմանյան կայսրության օրեցօր խորացող տնտեսական ու քաղաքական ճգնաժամը, բռնատիրության գոյության, ամբողջականության պահպանության ձգտումները, կայսրության անկման հոգեվարքի դաժան հարվածներն ուղղում էին հպատակ քրիստոնյաների վրա:

Սոցիալ-տնտեսական, քաղաքական փոփոխությունները, որոնց թելադրողի դերը ստանձնել էին եվրոպական տերությունները, թուրքական վարչակարգին մղում էին վարել խուսանավելու քաղաքականություն, որպեսզի կայսրությունը խուսափեր եվրոպական կապիտալի կցորդը դառնալուց, և խոչընդոտներ ստեղծվեին ազատության ձգտող հպատակների անկախության հասնելու գործընթացի առաջ: Շահերի հակամարտությունների վերածված Մերձավոր Արևելքում էին կենտրոնանում նաև հայանպաստ ու հակահայ քաղաքական, դիվանագիտական ձեռնարկումները, որոնց ենթատեքստից էլ հասակ էին առնում ու ձևավորվում բռնատիրության պետական քաղաքականության վերածվող ծրագրերը:

Եթե մեծ տերություններն Օսմանյան կայսրության վրա ներգործելու լծակի էին վերածում քրիստոնյա հպատակներին պաշտպանելու շահամոլ քաղաքականությունը, ապա հակադարձ ուժով խորացվում էին տնտեսական, քաղաքական, կրոնական հալածանքները, որոնք մեծապես նպաստում էին Հայկական հարցը կոտորածների ճանապարհով լուծելու քաղաքականությանը: XV դարից թուրքական բռնատիրությունը որդեգրեց «սրով նվաճվածը սրով պաշտպանելու» քաղաքականությունը, որի հարվածների տարափների տակ ընկնելու էին հատկապես քրիստոնյա հպատակները:

Ուծացման ու կրոնափոխության մահաբեր ալիքները կուլ տվեցին Կարինի նահանգի հայաշատ գավառները: XVI-րդ դարում՝ 1578թ.՝ Լալա Մուստաֆա փաշայի արշավանքից հետո մահմեդական ցեղերն ու ցեղախմբերը բնակություն հաստատեցին Բաբերդի, Սպերի, Կիսկիմի և այլ գավառակներում, զգալի թվով հայեր բռնի կրոնափոխվեցին: XVII-XIX-րդ դարերում այդ գործընթացը լրացվեց նոր երևույթներով, հալածանքների նոր ձևերով: Բնական է, որ նման պայմաններում փոփոխվելու էր նահանգի ժողովրդագրությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կարինի նահանգի ժողովրդագրության առանձնահատուկ դրսևորումները, բնակչության տեղաբաշխման, արտագաղթերի, դրանց պատճառների ու հետևանքների վերլուծություններն ամբողջովին պարզաբանված չեն: Թեև 1992 թ. տպագրվեցին իմ «Կարին», 1994 թ. Ա. Մելքոնյանի, Էրզրում: Ազգային կազմը: Հայերի տեղաբաշխումը: Մեծ գաղթը, 2014 թ. իմ «Կարինի նահանգը

XIX դարի երկրորդ կեսին» մենագրությունները[1], այնուամենայնիվ նահանգի ժողովրդագրության ասպարեզում պահպանվում են չլուսաբանված հարցեր, ինչը լրացնելը դառնում է անհրաժեշտություն, որովհետև, զարգացնելով իր հակագիտական տեսությունը, թուրք պատմագրությունը «ապացուցում է», որ Արևմտյան Հայաստանում հայերը փոքրաթիվ էին, և թուրք ժողովրդի ու պետության բարի կամքի արտահայտությունն էր, որ դարեր շարունակ գոյատևման հնարավորություն է տրվել կայսրությունը մասնատել ցանկացող հայությանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կարինի նահանգի ժողովրդագրության ուսումնասիրությանը նվիրված ատենախոսության նպատակն է, քննության ենթարկելով ձեռք բերված վկայությունները, արխիվային փաստաթղթերը, հուշագրությունները, փորձել ի հայտ բերել ճշմարտությունը, բացահայտել թուրքական «վիճակագրության», այն կրկնող եվրոպացի և ռուս որոշ հեղինակների կողմնակալ տեսակետների էությունը, խորազնին վերլուծել, համադրել նահանգի վարչաքաղաքական բաժանումների համակարգը, դրանց պատմաաշխարհագրական բնույթը, հստակեցնել նահանգի, գավառների, գավառակների սահմանները, տարածքային ընդգրկվածությունը, մատչելի, պատմական, ժողովրդագրական հիմունքներով ներկայացնել նահանգի քաղաքների, գավառակենտրոնների, խոշոր բնակավայրերի, բերդերի, ամրոցների, եկեղեցիների. կրթական ու մշակութային հաստատությունների, առևտրի, արհեստների մասին տեղեկությունները:

Աշխատանքի ընթացքում կիրառվել են հետազոտության այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են համադրման (համաբերման), վերլուծական-համադրական, պատմահամեմատական, հետադարձ վերլուծության մեթոդները:

Ուսումնասիրության նպատակները նախատեսում են պատմական, աշխարհագրական, հնագիտական և այլ տվյալների ու գիտելիքների համադրում: Այդ պատճառով հիմնվել ենք համադրական մեթոդի վրա (պատմություն-աշխարհագրություն, պատմություն-հնագիտություն, պատմություն-ճարտարագիտություն և այլն):

Վերլուծական-համադրական մեթոդի կիրառման շնորհիվ իրականացվել է փաստերի վերհանում, հավաքագրում, համակարգում, ընդհանրացում և դրանք ժամանակի և տարածության մեջ տեղադրելով՝ տարբեր երևույթների էության սահմանում: Դա հնարավորություն է տվել ամբողջական վերլուծության ենթարկել նահանգի վարչական բաժանումը, տարածքային-ժողովրդագրական հարցերը:

---

[1] Զատիկյան Հ., Կարին, Երևան, 1992, Մելքոնյան Ա., Էրզրում, Ազգային կազմը: Հայերի տեղաբաշխումը: Մեծ գաղթը, Երևան, 1994: Զատիկյան Հ., Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 2014:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարինի նահանգի պատմաաշխարհագրական, պատմաժողովրդագրական խնդիրները մեզանում դեռևս առանձին և համապարփակ ուսումնասիրության առարկա չեն դարձել, բացի վերը նշված մենագրություններից: Տարածքային, ժողովրդագրական մեծաքանակ հարցեր առ այսօր էլ պահպանում են իրենց արդիականությունն ու այժմեականությունը, հատկապես XIX-րդ դարի երկրորդ կեսից իրականացված ու 1915-1922 թթ. ավարտված հայոց ցեղասպանության հետ առնչվող խնդիրների առումով:

Պատմահամեմատական մեթոդի և դրա պատմաճագումնաբանական ուղղությունների օգտագործման շնորհիվ հնարավոր է դարձել վերականգնել և ներկայացնել նախորդ դարերի հասարակական-աշխարհագրական իրողությունները, ցուցադրել նույն պատմաաշխարհագրական տարածքում բնակվող տարբեր ազգերի զարգացման ընդհանրականության արդյունքում ծնված համանման երևույթների միջև փոխկապակցվածությունը և տարբեր ազգերի շրջանում միաժամանակ ձևավորված երևույթների համադրելիությունը:

Հետադարձ վերլուծության մեթոդի կիրառումը, որը թույլ է տալիս վերականգնել առանձին երևույթները հետադարձ կապի հաստատման միջոցով, ավելի ուշ շրջանի աղբյուրների տեղեկությունների հիման վրա հնարավորություն է տվել ճշգրտելու պատմաաշխարհագրական մի շարք կարևոր հարցեր, որոնցից են կազմված 42 աղյուսակները, որոնք պատկերացում են տալիս նահանգի, գավառների, գավառակների հայ բնակչության քանակի, զբաղմունքի, կրթական ու մշակութային հաստատությունների մասին: Նոր երկու առանձին աղյուսակներ ենք կազմել հայ և մահմեդական բնակչության քանակի, աճի վերաբերյալ և գրեթե պատասխան ենք տալիս ժողովրդագրական բնույթի հարցերին, որոնք գիտական նորույթ լինելուց բացի, պատմահամեմատական, պատմաաշխարհագրական առումներով զգալի նյութեր են պարունակում նահանգի ժողորդագրական բաց մնացած հարցերի բնագավառում:

Պատմական ճշմարտությունը բացահայտելու և մեր դրույթները հիմնավորելու նպատակով մեծ տեղ ենք հատկացրել արխիվային փաստաթղթերին: Դրանք նաև որպես կռվաններ են ծառայել իրարամերժ տեսակետների դեպքում ճիշտ կողմնորոշվելու ժամանակ, տեսակետներ, որոնք նույնպես կարիք ունեն խոր մեկնաբանությունների ու վերլուծությունների:

Նկատի ունենալով, որ ժողովրդագրության բնագավառում առկա են բազմաբնույթ հիմնահարցեր, ելնելով թեմայի սկզբունքներից՝ ատենախոսության հիմնահարցը շարադրել ենք նահանգի բնակավայրերի պատմական անցյալին շաղկապված, որովհետև լինելով ժողովրդագրության հիմնական պահանջներից մեկը՝ պատմական անցյալը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու հայրենիք հասկացության, ժողովրդի զբաղմունքի, մշակույթի, կրթական համակարգի մասին, որոնց ամբողջականության մեջ էլ դիտելի են դառնում տնտեսական ու քաղաքական

կացությունը, նրա հարկադիր շեղումները, որոնք իրենց ազդեցությունն են թողնում ժողովրդագրական շարժերի վրա:

Եվրոպացի, ռուս, հայ ճանապարհորդների, հուշագիրների, հետազոտողների երկերում վիճակագրության առումով առկա է նոր վկայությունների, տեղեկությունների պակաս, իսկ հաճախադեպ կրկնությունները երբեմն ներկայացվում են առանց վերլուծությունների: Նման իրավիճակում հենվել ենք արխիվային հավաստի փաստաթղթերի վրա և նրանց օգնությամբ պարզել իրականությունը: Երբեմն, երբ ձեռքի տակ չենք ունեցել վստահելի վկայություններ, դիմել ենք միջին կոչված տարբերակին՝ հասնելով փոքր շեղումներով արդյունքների:

Բնական է, որ մեր օգտագործած արխիվային փաստաթղթերի նկատմամբ ևս կառաջանան կասկածներ: Բայց այստեղ համոզիչ փաստարկ պետք է դառնա այն իրողությունը, որ ներկայացված փաստաթղթերը ենթարկվել են համեմատական վերլուծության: Ավելին, օգտագործված փաստաթղթերի ճնշող մեծամասնությունն այն հեղինակների վկայություններն են, ովքեր ժամանակակիցներ են, անկողմնակալ հետազոտողներ, ինչպես օրինակ՝ Ղևոնդ Ալիշանը, Ս. Էփրիկյանը, Թեոդիկը, Ղ. Ինճիճյանը, Գ. Սրվանձտյանցը, Ա-Դոն, Ալ. Երիցյանը, «Անանուն» հեղինակները, Ն. Փոստոյանը և այլք, որոնց հաղորդած տեղեկություններն ավելի դյուրին դարձրին կեղծիքների, իրական վիճակագրության բացահայտումը[2]:

Ատենախոսության մեջ առաջին անգամ մանրամասն վերլուծության ենք ենթարկել «Ծրագիր բարենորոգմանց Կարին նահանգի» փաստաթուղթը, որը գիտական շրջանառության մեջ դնելու համար տպագրել ենք առանձին հոդված[3]:

Վերլուծելով այդ կարևոր փաստաթուղթը՝ հանգել ենք այն հետևության, որ ծրագիրն արժեքավոր է, երբ այն դիտվում է ժամանակաշրջանի իրադարձությունների տեսանկյունից, որի պայմաններում փաստաթուղթը վեր է ածվում արևմտահայության ազատագրության աստիճանաբար խորացող գործընթացի կարևորագույն դրսևորման:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ատենախոսության հիմնահարցը ընդգրկում է 19-րդ դարի երկրորդ կեսը, մի ժամանակահատված, երբ երբ գաղտնի ու բացահայտ ուծացման ու ֆիզիկական բնաջնջման թուրքական քաղաքականությունը հասավ

---

[2] Ալիշան Ղևոնդ, Այրարատ, Վենետիկ, 1890, ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆոնդ, լրացուցիչ նյութերի ցուցակ, գ. 23, Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Բ, Վենետիկ, 1902, Բայազետ, «Բազմավեպ», 1901, փետրվար, էջ 61-67մ, Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Փարիզ, 1929, Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա., Վենետիկ, 1806, Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, Երիցյան Ալ., Թե տաճկական Հայաստանում որքան հայ կա, «Փորձ», 1880, հունիս, հուլիս, էջ 88-113:

[3] Զատիկյան Հ., Կարինի բարենորոգումների ծրագիրը /1879 թ./, տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 3, էջ 185-201 /այդուհետ՝ ԲՀԱ /:

վերջնագծին՝ 1895-1896թթ. Կոտորածներին: Համիդյան բռնատիրությունը իրականացնելով Թուրքիան թուրքերի համար ծրագիրը, Արևմտյան հայաստանը վերածեց ավերակների, հայրենազրկեց, գաղթական դարձրեց գրեթե կես միլիոն արևմտահայությանը, ինչի արդյունքում զգալի փոփոխության ենթարկվեց Կարինի նահանգի ժողովրդագրությունը: Բռնատիրությունը իրականացնելով մահմեդականության քանակական գերազանցության ծրագիրը, դրանով իսկ պատասխան տվեց նաև Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու Եվրոպայի պայանջներին:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնում: Ատենախոսության թեմայի կապակցությամբ ՀՀ և արտասահմանյան գիտական պարբերականներում հեղինակը տպագրել է քսաներկու հոդվածներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը, մինչ այդ տպագրված մեր երկու աշխատությունները Կարինի նահանգի ժողովրդագրական պատկերի ներկայացման փորձերից են և ունեն գործնական նշանակություն, որովհետև գիտական շրջանառության մեջ դնելով արխիվային չուսումնասիրված փաստաթղթեր, հետագա ուսումնասիրողների, բուհերի ուսանողների թեմատիկ մշակումների համար ստեղծել ենք աղբյուրագիտական սկզբնաղբյուրի բազմաբնույթ հավատընծայելի հիմքեր: Ատենախոսությունը միաժամանակ ընթերցող լայն հասարակությանը հնարավորություն կտա բավարարել պատմական հայրենիքի նկատմամբ հետաքրքրությունները:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Ժողովրդագրությունը որպես գիտություն սկզբնավորվեց XVII-XVIII դարերում: Դա մի ժամանակաշրջան էր, երբ առանձնակի հետաքրքրություն ձևավորվեց մարդկության պատմության անցած ժամանակների նկատմամբ: Հատկապես վիճահարույց էր մինչև XVII-XVIII դարերը աշխարհի, այս կամ այն երկրի բնակչության քանակի խնդիրը: Այն պարզելու համար ուսումնասիրողներն առաջարկում էին տարբեր լուծումներ: Ի վերջո, որպես ընդհանուր տեսակետ ընդունվեց պատմության միջոցով խնդիրը լուծելու տարբերակը՝ առաջնային համարելով երկու որոշիչ հասկացությունները՝ «քանակական, /այն, որ բնակչությունը ընդհանրություն է/ և տարածքային /այն, որ բնակչությունը կապված է որոշակի տարածքի հետ.../»[4]:

[4] Шелестов Д. К., Историческая демография, Москва, 1987, стр. 194:

Ցարական Ռուսաստանում ժողովրդագրության նախնական պատկերացումներն ի հայտ եկան XIX դարում: Արևելյան Հայաստանը, որը ցարիզմի գաղութային ծայրամասերից մեկն էր, անմասն չէր այդ գործընթացից: Հայ առաջավոր, եվրոպական կրթություն ստացած մտավորականության, հոգևոր դասի ներկայացուցիչներ Խ. Աբովյանը, Մ. Թաղիադյանը, Պ. Պռոշյանը, Գ. Ախվերդյանը, Ռ. Պատկանյանը, Պ. վրդ. Նաթանյանը, Ղ. վրդ. Փիրղալեմյանը, Ա. վրդ. Սեդրակյանը, Ա. վրդ. Տեր-Սարգսյանը, Տ. Նավասարդյանը, Գ. Տեր-Ալեքսանդրյանը, Գ. Շերենցը, Մ. Բարխուդարյանը, Գ. Խալաթյանը, Ե. Լալայանը, Ս. Հայկունին և շատ ուրիշներ արգասավոր գործունեություն ծավալեցին այս ուղղությամբ: Բանահավաքները, բարեբախտաբար, ազգագրական, բանահյուսական արժեքավոր նյութեր հավաքելուն զուգընթաց՝ անդրադառնում են նաև մշակութային, կրթական, կենցաղային, զբաղմունքային կյանքին՝ մեծ ներդրում կատարելով հետաքրքրություն ներկայացնող թեմայի մշակման գործում:

Ուսումնասիրությունների մեջ գերակշռում են տեղային բնույթի առանձին գավառների, գավառակների, գյուղերի պատմությանը նվիրված աշխատությունները: Այնուհանդերձ, Գ. Սրվանձտյանցի, Ա-Դոյի, Ղևոնդ Ալիշանի, Ս. Էփրիկյանի, Ատրպետի, Մ. Միրախորյանի, Ղ. Ինճիճյանի, Մ. Արսլանյանի, Ե. Լալայանի, Ս. Ծոցիկյանի, Գ. Հակոբյանի, Հ. Հուլանյանի, Մ. Հաճյանի, Ե. Մելիքյանի, Լ. Չորմիսյանի, Լ. Սրապյանի, Հ. Տաշյանի, Հ. Քոսյանի, Ալ. Երիցյանի, Գ. Սյուրմենյանի, «Անանուն» հեղինակների աշխատությունները, հուշագրությունները կարևոր ներդրումներ են հարցի մշակման ասպարեզում, թեև նրանք ամբողջական պատկերացում չեն տալիս հետաքրքրություն ներկայացնող խնդրի մասին: Ուսումնասիրության շարադրման սկզբնաղբյուրներն արխիվային փաստաթղթերն են, որոնք ընտրել ենք ՀԱԱ 40 ֆոնդերի ավելի քան 800 գործերից, ԳԱԹ (Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարան) 18 ֆոնդերի 250 գործերից, Մատենադարանի (Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ) 21 ֆոնդերի 100 գործերից, որտեղ հատկապես գերակշռում են արևմտահայության ծանր վիճակից դուրս բերելու մտահոգությունները, կրկնված վիճակագրական կցկտուր տեղեկությունները:

Օտար հեղինակների շուրջ 100 ուսումնասիրությունները, աշխատությունները, հուշերը, լայն տեսադաշտ բացելով խնդրի պարզաբանման համար, միաժամանակ զգաստացնող դեր ունեն: Հատկապես թուրքամոլ մի շարք հեղինակներ, օգտագործելով կառավարական «վիճակագրության» տվյալները, նպաստում են այն թյուր տեսակետի հիմնավորմանը, որ արևմտահայությունն Արևմտյան Հայաստանում կազմում էր բնակչության փոքր հատվածը, և բացառվում է նրանց ինքնավարություն կամ ինքնիշխանություն տալու եվրոպական երկրների պահանջի կատարումը:

Թուրքական կառավարությունը միտումնավոր ստեղծել էր երկու վիճակագրություն: Առաջինը դիվանագիտական վիճակագրությունն էր, որ

տրամադրվում էր թուրքամետ գործիչներին, ուսումնասիրողներին, որոնք, օգտագործելով իրականությունից հեռու փաստերը, հիմնավորում էին կառավարական շրջանակների քաղաքականությունը: Ֆինանսական վիճակագրությունը, որ պահվում էր գզրոցներում, արևմտահայության թվաքանակի իրական պատկերն էր: Խիստ գաղտնի այդ փաստաթղթերի օգնությամբ էլ իրականացվում էին հարկահանությունը, տնտեսական այլ գործառույթներ:

Արխիվային փաստաթղթերից մեկում վկայություն կա այն մասին, որ Էրզրումում Անգլիայի հյուպատոսը տարակարծիք է, չի վստահում Վ. Քինեի տեղեկություններին և գտնում է, որ հայերի թիվը պետք է բարձրացնել մինչև 23%[5]: Նույն կարծիքին է նաև ռուս գեներալ Զելենովը, որն առաջարկում է հայերի թիվն ավելացնել 10%-ով[6]:

Գ. Սրվանձտյանցի հավաքած վիճակագրական տեղեկությունները համարժեք են մեր կողմից պայմանականորեն «Անանուն» անվանված հեղինակների վկայություններին, որոնք տեղեկություններ են հաղորդում XIX դարի վերջին և XX դարի սկզբների՝ Քղիի, Կամախ, Բաբերդ, Երզնկա, Բասեն, Դերջան գավառակների մասին[7]:

Նույնպիսի գնահատելի վիճակագրություն է կազմել Նազարեթ Փոստոյանը, որը ծագումով Քղիի Խուբս գյուղից էր և ԱՄՆ-ից այցելելով հայրենիք՝ մանրամասնություններով գրի է առել գավառակի 48 գյուղերի պատմությունը, ժողովրդագրական ցուցանիշները[8]:

Գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանն ընդգրկող վիճակագրական տեղեկություններով լեցուն է ՀԱԱ 476 ֆոնդը, որի բանահավաք հեղինակը Հ.Գալստյանն է: Տարբեր ու օտարալեզու աղբյուրներից հեղինակը հավաքել, դասակարգել ու մասնավորեցրել է վիճակագրական տեղեկությունները՝ այն վերածելով աղբյուրագիտական ժողովածուի: Հեղինակը, սակայն, չի հասցրել վերլուծության ու ստուգման ենթարկել հավաքած բազմաբնույթ նյութերը, չի կատարել համեմատական վերլուծություն, այդ պատճառով էլ նյութերի մեծ մասը հակասում, ժխտում են իրար:

Արևմտյան Հայաստանի և Կարինի նահանգի սոցիալ-տնտեսական հարաբերությունների նկարագրությանն ու վերլուծությանն անդրադարձել են հայ և օտարազգի մեծ թվով ճանապարհորդներ, զինվորական գործիչներ, ուսումնասիրողներ: Ամենաառաջինն այդ խնդրին ձեռնամուխ է եղել Կարինի Սուրբ Աստվածածին եկեղեցու քահանա Հակոբ Կարնեցին: Նրա «Շինված Կարնո քաղաքին», «Տեղեկագիր Վերին Հայոց» աշխատությունները ոչ միայն ունեն ժամանակագրական, պատմական, ժողովրդագրական, աշխարհագրական կարևոր նշանակություն, այլև նահանգի տնտեսական ու

---

[5] ՀԱԱ, ֆ. 476, ց. 5, գ. 131, թ. 23:

[6] Նույն տեղում:

[7] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, 146, 152, 161, 163-164, 165:

[8] Նույն տեղում, գ. 140:

քաղաքական հարաբերությունների խնդրում ստանձնում են նաև սկզբնաղբյուրի դեր[9]:

Արևմտյան Հայաստանի պատմության նկատմամբ հետաքրքրությունը մեծացավ հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսին:

Ա-Դոն, Գ. Աղայանցը, Ղ. Ալիշանը, Ատրպետը, Ատոմը, Մ. Արսլանյանը, Դիվանին, Ա. Եզիկյանը, Ալ. Երիցյանը, Ղ. Ինճիճյանը, Ա. Թոխմախյանը, Ե. Լալայանը, Լինչը, Լեոն, Խաժակը, Ս. Ծոցիկյանը, Ս. Հայկունին, Հ. Հուլունյանը, Մ. Հաճյանը, Մ. Միրախորյանը, Պ. Նաթանյանը, Հ. Ոսկանյանը, Հ. Ոսկյանը, Ղ. Չարըգը, Լ. Չորմիսյանը, Լ. Սարգսյանը, Ն. Սարգսյանը, Լ. Սրապյանը, Գ. Սրվանձտյանը, Գ. Սյուրմենյանը, Հ. Տաշյանը, Գ. Փիսոն, Հ. Քոսեյանը, Հ. Քուրտյանը, ռուս և ռուսալեզու, հայ հեղինակներ Ա. Ալիմովը, Դմ. Բակրաձեն, Ր. Բեկգուլյանցը, Ա. Գիպիուսը, Վ. Գիրգասը, Գ. Գրոտեն, Մկրտիչ-բեյ Դադիանը, Բ. Դանցիկը, Ա. Երիցովը, Մ. Ժուկովսկին, Դ. Զավրիևը, Յու. Կազի-բեկը, Ա. Մեզիերը, Ա. Նովիչևը, Յա. Պրոսկուրյակովը, Ե. Սարկիսյանը, Ա. Տոմիլովը, Մ. Ուբիչինին և շատ ուրիշներ հուշեր, նկարագրություններ, ուսումնասիրություններ նվիրեցին խնդրո առարկա հարցին:

Շարադրանքի ընթացքում վերլուծելով նշված աշխատությունները հանգեցինք այն եզրակացության, որ ոչ բոլոր հեղինակներն են խորությամբ անդրադառնում խնդրին և տուրք տալով ժամանակաշրջանի ազգասիրական գրելաոճին՝ միայն ցավով են նշում հայրենիքի կաթվածահար կացությունը, երկարաձիգ նկարագրություններ ներկայացնում թուրք-քրդական խժդժությունների մասին, հաճախ նաև տուրք են տալիս այս կամ այն հեղինակի եզրահանգումներին, որոնք ոչ թե ընդգծում են արևմտահայության թշվառության պատճառները, ոչ թե ներկայացնում են իրականությունն ամբողջ էությամբ, այլ նրանից վերցնում են մի հատվածը և այն դարձնում, ըստ իրենց տեսակետի, հիմնահարցի առանցքային խնդիր:

Հեղինակների երկրորդ խումբը բավարարվում է պատմական անցյալի ներկայացմամբ, քննադատում ազգային անմիաբանությունը՝ այն համարելով հայրենիքը կործանման տանող հիմնական պատճառը: Ավելին, չհեռանալով տարածված մտքից, հեղինակների մի մասն այն մտքին է հանգում, որ թուրքական վայրագ կարգերն արգելակում էին ոչ միայն տնտեսության, այլև մշակութային առաջընթացը:

Ռուս հեղինակների մոտ այն թաքուն տեսակետը կա նաև, որ Արևմտյան Հայաստանում ճնշումների, հալածանմքների պատճառը հայ ազատագրական շարժումներն էին:

Ավելին, նրանք կրկնելով թուրքական պաշտոնական «վիճակագրության» կողմնակալ վկայությունները /Ա. Կոլյուբակին, Յա. Պրոսկուրյակով, Ա. Տոմիլով,

---

[9] Կարնեցի Հակոբ, Շինված Կարնո քաղաքին…, տես՝ Վ. Հակոբյանի կազմած «Մանր ժամանակագրություններ. 13-18-րդ դդ.», հ. 2, Երևան, 1956, Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903:

ինչ-որ չաթով նաև Վ. Գիրիասը, Ա. Նովիչևը և այլն/ արտահայտում են դարավերջի Թուրքիայի նկատմամբ ռուսական ցարիզմի դիրքորոշումները:

Ա. Համբարյանի, Ա. Հովհաննիսյանի, Թ. Հակոբյանի, Հ. Ղազարյանի, Ս. Մարկոսյանի, Մ. Ներսիսյանի, Վ. Պարսամյանի, Ե. Սարկիսյանի, Գ. Ստեփանյանի աշխատությունները բազմակողմանիորեն քննության առնելով Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացության հիմնահարցերը, առանձնապես չեն անդրադառնում այս կամ այն նահանգի, գավառի առանձնահատուկ խնդիրների վերլուծությանը:Չնայած այս սահմանազատմանը, վերոհիշյալ աշխատություններում մշակված գիտական հիմնադրույթները հիմք են ստեղծում հետագա ուսումնասիրությունների համար[10]:

Շարունակվող քաղաքական ու տնտեսական հալածանքների անվերջանալի, մեկը մյուսից սպանիչ ալիքները ողբերգական վիճակի էին հասցրել արևմտահայությանը: Ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական հոսանքները, կազմակերպություններն ու խմբակները վիճակից դուրս գալու ելք էին փնտրում: Դաժան պայքարի այդ քուրայում էլ ձևավորվում էր արևմտահայության ազատագրության գաղափարախոսությունը: Ժողովրդական լայն խավերի մեջ նկատելի էին տեղաշարժեր:

Կարինի նահանգի ազատագրական շարժումների մասին կարևոր փաստաթղթեր կան Հայաստանի Ազգային արխիվի՝ (ՀԱԱ) ֆոնդերում[11]:

Արևմտահայության ազատագրական շարժումներին զուգընթաց, նոր կերպարանք էր ստանում սուլթանական բռնատիրության հայակործան քաղաքականությունը: Եվրոպական տերություններին ու Ռուսաստանին խոստանալով կիրառել 61-րդ հոդվածը՝ Համիդը ձերբազատվեց նրանց միջամտությունից և նախապատրաստելով մահմեդական մոլեռանդ ամբոխին, կազմավորեց հանիդիե գնդերն ու սկսեց 1895-96 թթ. ջարդերը:

ՀԱԱ արխիվի համապատասխան ֆոնդերը, Եվրոպական տերությունների ու Ռուսաստանի դեսպանների, հյուպատոսների, դիտորդների, ականատեսների զեկուցագրերն ու վկայությունները, ժամանակակից մամուլը,

---

[10] Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում /1856-1914/, Երևան, 1956, Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1-2, Երևան, 1955, 1957, Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1850-1870 թթ., Երևան, 1967, Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Երևան, 1968, Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրականաա պայքարը թուրքական բռնապետության դեմ /1850-1870/, Երևան, 1955, Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1953, Саркисян Е. К., Նշվ.աշխ., Ստեփանյան Գ., Արփիարյան Ա., Երևան, 1955:

[11] ՀԱԱ, ֆ. 4256:

հուշապատումները լի են Կարինի նահանգում կատարված այդ զարհուրելի դեպքերի նկարագրություններով[12]:

Իրականացնելով հայկական ջարդերի քաղաքականությունը՝ սուլթանը, սակայն, չկարողացավ հայ ժողովրդի մեջ մեռցնել ազատության գաղափարը: Արևմտահայության՝ մինչև Մեծ եղեռնն ընկած ժամանակահատվածի պատմությունն այդ իրողության ամանավառ ապացույցն է:

Արխիվային փաստաթղթերից ու գրականությունից բացի, օգտագործել ենք նաև մամուլում տպագրված հոդվածները: Ա. Երիցովի, Ս. Ամատյանի, Գ. Արծրունու, Թ. Գևորգյանի, Ֆ. Բուռչանյանի, Ա. Խաչատրյանի, Ն. Մարտիրոսյանի, Պ. Մուրատյանցի, Սելյանի հոդվածները արժեքավոր վկայություններ են հաղորդում հիմնահարցի մասին[13]:

«Արաքս», «Արարատ», «Բազմավեպ», «Բանասեր», «Մասիս», «Փորձ», Մուրճ», ավելի քան 20 ամսագրերում, հանդեսներում, շուրջ 30 թերթերում, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում», «Հայկական սովետական հանրագիտարանում» տպագրված հոդվածներն ու հրապարակումները[14] մեծապես նպաստել են նահանգի ժողովրդագրական պատկերն ամբողջացնելու խնդրին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, երեք ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից, երկու հավելվածից, հեղինակի հրապարակումների ցանկից, եզրակացությունից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 530 էջ:

Ներածությունում խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների և խնդիրների մասին, ներկայացվում

---

[12] Նույն տեղում, Մշակ, 1896, Կարնո հիշատակին, Վիեննա, 1896:

[13] Ерицов А., Опы т статистического очерка народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881, Ամատյան Ս., Եկեղյաց գավառ, տե՛ս «Արևելյան մամուլ», 1884, 1886-1888, 1889-1890, Արծրունի Գ. Վիճակագրական տեղեկություններ Հայաստանի բնակիչների մասին, տե՛ս «Մեղու Հայաստանի», 1882, 24 հունվար, Գևորգյան Թ., Խոտորջուր, ԲԵՀ, 1971, թիվ 3, Բուռչանյան Ֆ., Մի ակնարկ հայոց Խոտորջրի անցյալից, տե՛ս «Էջմիածին», 1950, թիվ 3-4, Խաչատրյան Ա., Հին Բայազեդի և Բագրևանդի հայերին սպառնացող վտանգը, տե՛ս «Արձագանք», 1933, 16 հունվար, Մարտիրոսյան Ն., Բայազետի գավառը, տե՛ս «Վան-Տոսպ», 1916, թիվ 14, 15, 19, 1917, թիվ 1, Մուրատյանց Պ., Նկարագիր Ս. Հովանու վանուց և վիճակի նորին Բագրևանդա, «Արարատ», 1889, հունվար-մայիս, Սելյան, Տաճկահայաստանի ազգաբնակչությունը, «Մուրճ», 1895, թիվ 7, 1906, թիվ 10:

[14] «Արարատ», 1879, սեպտեմբեր, «Ճանապարհորդություն ի նահանգն Կարուց», գրեց Կ. Վ. Ս., «Արաքս», 1892, հունիս, «Վիճակագրական տեղեկություն Տաճկաստանի բնակչաց վերաբերյալ», «Բազմավեպ», 1850, հոկտեմբեր, «Երիզա», «Բանասեր», 1851, նոյեմբեր, «Ազգային վիճակագրություն», «Մասիս», 1886, սեպտեմբեր, «Երզնկա կամ Երիզա», «Փորձ» 1880, թիվ IV, «Մուրճ» 1895, թիվ 7, 1906, թիվ 10: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, 2, 3, Երևան, 1986, 1988, 2000, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1-12, Երևան, 1974, 1976-1978, 1980-1983, 1985, 1986:

ատենախոսության գիտական նորույթը և տրվում օգտագործված աղբյուրների ու գրականության տեսությունը:

Առաջին գլուխը կրում է **«Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կարինի նահանգում XIX դարի երկրորդ կեսին»**:

Օսմանյան կայսրության արևելյան նահանգներն իրենց աշխարհագրական դիրքով, առանձնահատկություններով, ազգային կազմով, զարգացման աստիճանով մնում էին որպես կայսրությունից առանձնացված տարածքներ, որտեղ ինչքան որ թույլ էր կենտրոնական իշխանությունը, այնքան ինքնիշխան էին քրդերը, թուրք բեյերը:

Օտար կապիտալի հոսքը, երկրի տնտեսության կարևոր ճյուղերը նրա տնօրինության տակ դնելը, արտադրողական ուժերի անմխիթար վիճակը հասցնում էին պետական սնանկացման: Կայսրությունը վերածելով եվրոպական կապիտալի շահավետ շուկայի՝ սուլթանական վարչակարգը նպաստում էր ազգային, առանց այն էլ թույլ արդյունաբերության քայքայմանն ու ոչնչացմանը: Նման պայմաններում հետզհետե աճում էին կայսրության պետական պարտքերը: 1875 թ. Թուրքիան պարտք էր 5,3 միլիարդ ֆրանկ, 1890 թ.՝ 6 միլիարդ ֆրանկ[15], 1897 թ.՝ 10643723700 պիաստր, կամ 1064372370 ռուբլի[16]: Զգալի տարբերություններ էին գրանցվում եկամուտների ու ծախսերի, արտահանման ու ներմուծման միջև:

Սուլթանական վարչակարգի՝ երկիրը անմխիթար վիճակից դուրս բերելու փորձերը պսակվում էին անհաջողությամբ, որովհետև, «Բարքերի ապականությունը մինչև այդ չտեսնված աստիճանի էր հասել: Երկրի մշակները մեռնում էին սովից... Գավառներն ընկճվում, քայքայվում էին կառավարիչների, անամոթ հարստահարիչների ներքո, այն կառավարիչների, որոնք իրենց բարձր դիրքը դրամով էին ձեռք բերել պալատից: Սիստեմի արմատական փոփոխությունը միայն կարող էր փրկել երկիր»,- գրում էր Կ.Պոլսում Անգլիայի դեսպան Հ.Էլիոտը[17]:

Տնտեսական ու քաղաքական խոր հակասությունների մեջ խրված երկրում հայ առևտրաարդյունաբերական դասը, չստանալով պետական հովանավորություն, կամ մի կերպ պահպանում էր իր գոյությունը, կամ վերածվում եվրոպական կապիտալի կցորդի:

Գործադրության ընդունելով մոնղոլական, արաբական և տեղական հողային օրենքները, դրանք լրացնելով Ղուրանի պահանջներով՝ ստեղծվում էին հողատիրության և հողօգտագործման բարբարոսական հարաբերություններ, որոնք լայն ասպարեզ էին բացում կողոպուտի ու թալանի համար:

Նկարագրելով այդ վիճակը՝ 1868 թ. օգոստոսին Կարինից Գ. Սրվանձտյանցին ուղղված նամակներից մեկի հեղինակը գրում էր, որ

---

[15] «Մշակ», 1903, մարտ 2:

[16] Кази-Бек Ю., Современная Турция, С. Петербург, 1897, стр. 52.

[17] «Մշակ», 1896, հուլիս 25:

գավառահայությունը «ողբացող անգամ չունի յոյսը միայն երկնքին է մնացել…»[18]:

Ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Կարինի նահանգի հարստահարությունների, հողազրկման, պանդխտության պատճառները բխում էին սուլթանական իրավակարգի վարած հակահայկական քաղաքականությունից, որի դեմ արևմտահայ գյուղացիությունն օգտագործում էր դիմադրության թույլ միջոցը՝ արտագնացությունը, պանդխտությունը:

Պանդխտությունը դիտելով ոչ միայն սոցիալական, այլև քաղաքական չարիք, ազգի ապագային մեծագույն հարված՝ ժամանակաշրջանի հայ գործիչները պայքարում էին այդ երևույթի դեմ, առաջադրում դրությունից դուրս գալու ուղիներ: Սակայն թուրքական բիրտ իրավակարգը բացառում էր այդ միջոցների դրական ներգործությունը, որովհետև հայաբնակ գավառները հայությունից դատարկելը պետական մշակված քաղաքականություն էր: Հարստահարությունների ալիքն ավելի մահաշունչ էր հարկահավաքության ժամանակ: Օսմանյան կայսրությունը, որ համարում էր անօրինական հարկերի դասական երկիր, հարկային քաղաքականության ամբողջ ծանրությունը գցել էր քրիստոնյա հպատակների վրա և նրանց հաշվին էր ապահովում պետության կարիքները:

Ուժեղի գերագույն իրավունքով իրականացվող հարկային քաղաքականությունը բազմապատկում էր արևմտահայության թշվառությունը:

Հայ առաջավոր մտավորականության, մասնավորապես պատրիարքարանի ուշադրությունը բևեռվեց այդ աղետալի իրավիճակի վրա: Պատրիարքարանի ուղերձով գավառներում ընկերությունների կազմակերպումը չուներ մեկ այլ նպատակ, եթե ոչ մաքառել այդ արհավիրքի դեմ, գոտեպնդել ժողովրդին, ապահովել նրա միասնությունը:

Թեև ուղերձի հանձնարարականում նշվում էին լոկ մշակութային գործունեության նպատակներ, սակայն նրանց հիմնական կոչումն ազգի գոյապահպանության հոգսերն էին, քաղաքական ու ազգային գիտակցության բարձրացումը, որպեսզի դիմակայվեր Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության վրա նրանց կործանարար ազդեցությունը:

Արևմտյան Հայաստանի և Կարինի նահանգի սոցիալ-տնտեսական հարաբերությունների նկարագրությանն ու վերլուծությանն անդրադարձել են հայ և օտարազգի մեծ թվով ճանապարհորդներ, զինվորական գործիչներ, ուսումնասիրողներ, որոնց աշխատություններով վերլուծությանն անդրադարձել ենք շարադրանքում:

Գրականության ուսումնասիրությունը բերեց այն եզրակացության, որ ոչ բոլոր հեղինակներն են խորությամբ անդրադառնում խնդրին:

Տուրք տալով ժամանակաշրջանի ազգասիրական գրելաոճին՝ միայն ցավով են նշում հայրենիքի կաթվածահար կացությունը, երկարածիգ

---

[18] ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի արխիվ, ֆոնդ 153, 2-րդ բաժին, գ. 146, թ. 1:

նկարագրություններ ներկայացնում թուրք-քրդական խժդժությունները, որոնք չեն ընդգծում արևմտահայության թշվառության պատճառները:

Չնայած բացթողումներին՝ հիշատակված աշխատությունները նաև գնահատելի տեսակետներ են պարունակում, որոնք կարևոր ներդրումներ են արևմտահայության՝ հետաքրքրող ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության ասպարեզում:

Ատենախոսության **երկրորդ գլխում՝ «Քաղաքական կացությունը Կարինի նահանգում XIX դարի երկրորդ կեսին»**, անդրադարձել ենք ժողովրդագրական շարժերի վրա նահանգում տիրող քաղաքական հարաբերությունների ազդեցությանը:

Թ. Հակոբյանի, Ա. Համբարյանի, Ա. Հովհաննիսյանի, Հ. Ղազարյանի, Ս. Մարկոսյանի, Մ. Ներսիսյանի, Վ. Պարսամյանի, Ե. Սարգսյանի, Գ. Ստեփանյանի և մի շարք այլ հեղինակների աշխատությունները թեև բազմակողմանիորեն քննության են առնում Արևմտյան Հայաստանի քաղաքական կացության հիմնահարցերը, սակայն հեղինակները հատկապես չեն անդրադառնում այս կամ այն նահանգի, գավառի առանձնահատուկ խնդիրների վերլուծությանը:

Չնայած այս սահմանազատմանը՝ վերոհիշյալ աշխատություններում մշակված գիտական հիմնադրույթները հիմք են դառնում՝ ավելի հստակեցնելու Կարինի նահանգի քաղաքական հարաբերությունների ամբողջական նկարագիրը[19]:

XIX դարում թուրքական կայսրության հպատակ ժողովուրդների կարող ուժերին համակել էր պայքարի ու ազատագրության ոգին:

Արևմտահայությունն անմասն չէր այս հեղաբեկումներից: Ազգային գիտակցության բարձրացման վկայությունը սահմանադրական շարժումն էր: Սահմանադրությունը թեև ոչինչ չտվեց ժողովրդին, սակայն տարրական իրավունքներից զուրկ արևմտահայությանն իր ուժերի նկատմամբ վստահություն ներշնչեց, դարձավ ազատագրական գաղափարախոսության հիմնաքար:

Սահմանադրական շարժման անբաժանելի մասն են կազմում 1872 թ. մշակված «Սահմանադրական հրահանգ գավառաց համար» և Կարինի բարենորոգումների ծրագիրը:

---

[19] Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում /1856-1914/, Երևան, 1956, Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1-2, Երևան, 1955,1957, Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1850-1870 թթ., Երևան, 1967, Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Երևան, 1968, Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ /1850-1870/, Երևան, 1955, Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1953, Саркисян Е.К., նշվ. աշխ., Ստեփանյան Գ., Արփիարյան Արփիար, Երևան, 1955:

Սահմանադրական շարժումը դիտելով անընդհատ զարգացման մեջ՝ դժվար չէ նկատել, թե հատկապես վերջին փաստաթղթում այդ գործընթացն ինչպիսի կարևոր ու խոր առաջընթաց է ապրել:

Հնարավոր չէ իրարից առանձնացնել 1863 թ. սահմանադրությունը, 1872 թ. «Հրահանգը», 1879 թ. Կարինի բարեփոխումների ծրագիրը: Ընդհանրությունն առկա է, վերջնական նպատակի ձգտումը՝ անսքող, որոնք առնչվում են կորցրած տնտեսական ու քաղաքական իրավունքները հետ ստանալու գաղափարին:

Հետաքրքրություն ներկայացնող ժամանակահատվածի կարևոր իրադարձություններից են 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Բեռլինի կոնգրեսը, որոնք արևմտահայությանը հույսերի ու հուսախաբությունների ծանր բեռ բերեցին:

Պատմաբանների տարբեր սերունդների ներկայացուցիչներ են անդրադարձել այդ ժամանակահատվածի լուսաբանմանը: Առ այսօր էլ Սփյուռքում ու մայր հայրենիքում լույս են տեսնում ուսումնասիրություններ, տպագրվում են հուշապատումներ, որոնցից, մեր նախընտրած թեմային վերաբերող ուսումնասիրություններից առանձնանում է Ռ. Հովհաննիսյանի աշխատությունը[20]:

Հանգամանալից ներկայացնելով Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ձևավորման ու գործունեության պատմությունը՝ հեղինակը հանգում է այն ճիշտ հետևության, որ ինչպես արևմտահայ, այնպես էլ կարինահայ ազատագրական շարժումներն արդյունք էին ազգային գիտակցության բարձրացման, ազատագրական գաղափարախոսության հիմնավորման:

1894-1896 թթ. կոտորածները լուրջ փոփոխության ենթարկեցին ժամանակահատվածի ժողովրդագրական ցուցանիշները: Այդ պատճառով էլ, ժողովրդագրության սկզբունքները համապատասխան անդրադարձ կատարեցինք պատմական անցյալին՝ հիմնավորելու համար բնակչության բնականոն շարժերի ու բռնի միջոցառումների արդյունք փոփոխությունների հետևանքներին: Ընդգծելով գավառների, գավառակների սահմանները, գյուղերի տեղագրությունը, բնակչության ազգային կազմի վկայությունները, կրթական, մշակութային, հոգևոր հաստատությունների գոյությունը, զբաղմունքը, ըստ տարիների, բնակչության շարժերի պատկերը, հնարավոր դարձավ հիմնավորել մեր տեսակետները, տալ խնդրի իրական նկարագիրը:

Նշված խնդիրները մշակելիս հենվել ենք Ա. Մելքոնյանի «Էրզրում» ուսումնասիրության, ապա նաև հետագայում գրած հոդվածների վրա, որոնք, լինելով նահանգի ժողովրդագրության առաջին փորձերից, համոզիչ

[20] Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ.:

եզրակացությունների ու հիմնավորումների շնորհիվ պատկերացում են տալիս XIX դարի առաջին կեսի համահունչ հիմնահարցի մասին[21]:

Թեմայի մշակման ասպարեզում կարևոր ներդրում է նաև Գ. Բաղալյանի հոդվածը, որը, անդրադառնալով XIX դարի 2-րդ կեսի նահանգի բնակավայրերի ժողովրդագրական խնդիրներին, տալիս է մի շարք հարցերի համոզիչ պատասխանը[22]:

Ատենախոսության **երրորդ գլուխը**, որ կրում է **«Կարինի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը XIX դարի երկրորդ կեսին»** վերնագիրը, անդրադառնում է թեմայի առանցքային հարցադրմանը:

Կարինի նահանգի ժողովրդագրական պատկերը, բնակչության տեղաշարժերը, աճի ու նվազման երևույթները շաղկապված էին Օսմանյան կայսրության վարած սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների հետ: Հավատընծա վիճակագրության բացակայությունը, սակայն, հնարավորություն չի տալիս խորամուխ լինելու նշված իրականության բացահայտմանը, պարզաբանելու թեմային առնչվող բազմաբնույթ հարցերը:

Պետական վիճակագրության բացակայությունը, իշխանությունների վարած ձուլման քաղաքականությունը, պարբերաբար կրկնվող վարչատարածքային փոփոխությունները առավել դժվարացնում են ճշմարիտ վիճակագրությունը փնտրելու աշխատանքները:

Ձեռք բերված նյութերի հիման վրա հնարավոր դարձավ ասպարեզ բերել նահանգի XIX դարի երկրորդ կեսի և XX դարի առաջին տասնամյակի հայ բնակչության մոտավոր թվաքանակի հաշվարկներ և ըստ տարիների՝ ցույց տալ հայ բնակչության աճի ու նվազեցման ցուցանիշները: Այդ նպատակով մեր կազմած աղյուսակները, որոնք համեմատական, քանակական վերլուծությունների հնարավորություն են ընձեռում, ավելի քան հստակեցնում են նահանգի, բնակավայրերի ազգային կազմի մասին պատկերացումները, ընդգծում թուրքական իշխանության հայակուլ քաղաքականության կործանարար հետևանքները, որոնք՝ որպես պետական միջոցառումներ, հանդես եկան 1894-1896, 1915-1922 թթ. կոտորածների տեսքով, Արևմտյան Հայաստանը հայաթափվեց, ոչնչացվեց բնիկ ժողովրդի գրեթե 80 տոկոսը:

---

[21] Մելքոնյան Ա., Էրզրում, Ազգային կազմը: Հայերի տեղաբաշխումը: Մեծ գաղթը, Երևան, 1994, «Եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքները 15-րդ դարի վերջին 1915 թ.», տե՛ս Հայոց ցեղասպանություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2001, Հայ բնակչության էթնոկրոնական դիմախեղման գործընթացները Արևմտյան Հայաստանում 16-18-րդ դարերում, տե՛ս «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2005:

[22] Բաղալյան Գ., Էրզրումի վիլայեթի որոշ կազաների հայ բնակչության թվաքանակի ճշգրտումն ըստ Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայ գաղթականների 1914-1915թթ. կազմված վիճակագրական ցուցակների, տե՛ս «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», թիվ 4, Երևան, 2001: Արևմտյան Հայաստանի պատմա-ժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրեին, տե՛ս «Վեմ», 2015, թիվ 4(52):

1639 թ. մայիսի 17-ին Կասր-Ե Շիրինի պայմանագրով, որը 1555 թ. մայիսի 26-ի Ամասիայի պայմանավորվածության վավերացումն էր, ավարտվեցին թուրք-պարսկական պատերազմները, և Հայաստանը բաժանվեց երկու՝ Արևմտյան և Արևելյան մասերի: Թուրքական տիրապետություն հաստատվեց Տուրուբերանի, Վասպուրականի մի մասի, Վան քաղաքի, Աղձնիքի, Ծոփքի, Բարձր Հայքի, Կորճայքի, Մոկքի վրա: Պարսկաստանին անցան Հայաստանի Արևելյան շրջանները, որտեղ կազմվեցին բեգլերբեգությունները:

Արևմտյան Հայաստանում Էրզրում կենտրոնով կազմվեց Էրմինիստան կուսակալությունը, որը հետագայում անվանվեց Էյալեթ:

XVII դարում /1640, 1655 թթ./ Անատոլիա կատարած ուղևորությունների ժամանակ, Էրզրում և նահանգ է այցելել թուրք ճանապարհորդ, թուրքական վայրագությունների, «նվիրական իսլամի» ջերմ պաշտպան, «անհավատների» թշնամի, թուրքական ռազմաֆեոդալական վերնախավի ներկայացուցիչ Հաֆըզ Էվլիյա Չելեբին: Նա նախ տեղեկացնում է, որ Անատոլիայի էյալեթներից 12-րդը Էրզրումի էյալեթն է, որն ունեցել է 12 սանջակ /գավառ/: Այնուհետև, անցնելով էյալեթների սանջակների թվարկմանը, հայտնում է, որ Էրզրումի էյալեթն ունի 10 սանջակ. «Կարահիսարի Շարքի, Բասեն, Իսպիր, Խնուս, Մանազկերտ, Կուզիջան, Թորթում, Մժնկերտ, Մամրվան: Էրզրումը փաշայի սանջաքն էր»[23]: Մեկ այլ աղբյուր Էրզրումի էյալեթի մասին հայտնում է. «Այս էյալեթը Ռումի արևելյան կողմում, Արմենիայի մի մասն է համարվում: Սահմաններն են.արևելքում՝ Երևանի, Կարսի վիլայեթները, հյուսիսում՝ Տրապիզոնի վիլայեթը, հարավում՝ Դիարբեքիրը և Վանը: Էյալեթն ունի 11 սանջակ. Էրզրումի /փաշայի սանջակն է/, Իսփիր, Բասեն, Թորթում, Խնուս, Կարահիսարի Շարքի, Կրզուջան, Մամրվան, Քրզի, Մեջենկերտ, Նեքսա, Ալաշկերտ և Բայազետ», ապա թվարկվում են Էրզրումի լիվայի կազաները /գավառները/. «Էրզրումի լիվայի կազաներն են. Էրզինջանը, /Երզնկա/, Բայբուրդը, Վերին Թերջանը, Ստորին Թերջանը, Թորթումը, Դեվերլերը /«այլ կերպ Գյումուշխան», Թորուլը, Կուրաչայը, Կրզուչանը, Կոզայը, Գերջանիսը, Քելքեթը, Քեմախը, Քեվանսը, Մերդջանը, Յաղմուր-Դերեսին»[24]:

Օտար մեկ այլ աղբյուր, որը վկայակոչում է Ա.Մելքոնյանը, հայտնում է, որ «Էրզրումի նահանգը կազմավորվել է 1500-1534 թթ. ընթացքում»[25]:

Գուցե հիշատակության համար հիմք է հանդիսացել այն փաստը, որ 1514 թ. Չալդրանի ճակատամարտից հետո թուրքերը գրավեցին Բարձր Հայքի մի մասը Էրզրումի հետ միասին: Հետևաբար, նոր գրաված տարածքում, բնական է, որ կազմվելու էր վարչական միավոր, ինչն էլ թերևս հանդիսացել է Էրզրում կենտրոնով ձևավորված Էրմինիստան կուսակալությունը, էյալեթը:

---

[23] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, տե՛ս Է. Չելեբիի ուղեգրությունը, հ. Ա, Երևան, 1967, էջ 23:

[24] Նույն տեղում, էջ 23:

[25] Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 27:

Այստեղից էլ բերված փաստերը վկայում են, որ XVI դարում կազմավորվել է Էրզրումի էյալեթը:

XVII դարում, հայտնում է Հակոբ Կարնեցին, նահանգն ուներ 23 գավառ. 1. Լակզի ձոր, 2. Խորձանյաց երկիր, 3. Ղզըլջան, 4. Դերջան, 5 Եկեղյաց երկիր, 6. Դարանաղաց երկիր, 7. Գայլ գետի երկիր, 8. Շեռյանա երկիր, 9. Կակվանցա ձոր, 10. Ծանախա ձոր, 11. Խախտյաց երկիր, 12. Սպերի ձոր, 13. Իշխանանիստ ձոր, 14. Մամրվան, 15. Վերին Բասեն,16. Ներքին Բասեն, 17. Ղարա եազի, 18. Խալի եազի, 19. Ալաշկերտ, 20. Մանազկերտ, 21. Ապահունեաց երկիր, 22. Վարդո, 23. Թաքման[26]:

Նահանգն անվանելով «Վերին Հայք» Հակոբ Կարնեցին նահանգի գավառները բաժանում է արևելյան, արևմտյան, հյուսիսային, հարավային շրջանների և արժեքավոր տեղեկություններ հաղորդում նրանց տեղագրության, բնակչության զբաղմունքի և, որ առավել գնահատելի է, բնակչության ազգային կազմի մասին, որոնք հիմնավոր ապացույցներ են դառնում՝ հաստատելու, թե 200 տարվա ընթացքում իրականացված հայաթափման ու ուծացման քաղաքականությունն ինչ կործանարար ազդեցություն է ունեցել ժողովրդագրության փոփոխության, բնակչության քանակական շարժի, նյութական մշակույթի արժեքների ոչնչացման խնդիրներում:

Նույն XVII դարում Էրզրումի էյալեթն ուներ հետևյալ կազմը՝ Էրզրումի էյալեթը. Սանջաները՝ Էրզրում, Կարահիսարի-Շարքի, Քըղի /Կեղի/, Խնուս, Վերին Բասեն, Մանազկերտ, Թեքման, Կոզի-ջան /Ղուզուջան ընձոր/, Իսփեր, /Սպեր/, Թորթում, Սարաջեն Բասեն Մամրվան, Բեյլիրբեյի տարեկան եկամուտը «հետևակի արծաթ զեբելաներով 7 800 հեծելազորից էր կազմված»:

XVIII դարում Օսմանյան կայսրությունը բաժանվում էր 26 էյալեթների, որոնք ունեին 163 սանջակ, 1800 կազա, 1831թ.՝ 29 նահանգ, 179 գավառ[27]:

Ղ. Ինճիճյանի հաղորդմամբ Էրզրումի փաշայի իշխանությունը տարածվում էր՝ «'ի բազում սահմանս. մինչև նաև պայէզէտ և մալազկերտ», ապա հիշատակում «յառաջին ժամանակս» նահանգի գավառները.«ա. Գարահիսարի շարգըի. /կամ Շապին-Գարահիսար/, բ. Քեմախ, գ. Գուրիջայ. դ. Կերճանիս. ե. Էրզինճան. զ. Գուղայ. է. Դերճան. ը. Քիղի. /այն է՝ Կեղի /թ. Պայպուրտ. ժ. Բասին. ժա. Իսփիր. ժբ. Քեչկիա. /այն Էքելքիութ/. ժգ. Շեհրիպան. ժդ. Միւրատխան. ժե. Խնուս Լիվա. ժզ. Դուղըս. ժէ. Միճինկիրտ Լիվա. /այն է՝ Մժնկերտ/ ժը. Մամերվան Լիվա. /զոր դնէ նաև յախլցխա/. ժթ. Մելազկերտ. /այն է՝ Մանազկերտ/. ի. Զարուշատ. իա. Թորթում. իբ. Ալաշկերտ. իգ. Թեքման. իդ. Պայէզիտ. իե. Կիվանիս. իզ. Եազմուր տէրէ. իէ. Հասան գալե.»[28]:

Սակայն ժամանակի ընթացքում կատարվում են վարչական փոփոխություններ, կրճատվում են նահանգի սահմանները, և XIX դարի

---

[26] Հակոբ Կարնեցի, նշվ. աշխ., էջ 9:
[27] Մելքոնյան Ա., Էրզրում..., էջ 26:
[28] Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն..., էջ 64-65:

սկզբներին պատկերը ներկայացվում է այսպես. «բայց այժմ 12 են սանճագք Էրզիռումայ, որք ըստ ճշգրիտ անունաց կոչին.

ա. Էրզիռում. ը. Էրզինկեայ.
բ. Խնուս. և Թեքման թ. Կամախ, կամ Քեմախ.
գ. Բասէն. ժ. Քալքիւթ, կամ Քելքիթ.
դ. Թորթում ժա. Կեդի, կամ Քիդի.
ե. Սպեր. զ. Բաբերդ, կամ Պայպուրտ ժբ. Գուզիջան»[29]:
է. Դերճան

Ղ. Ինճիճյանը հայտնում է նաև, որ XIX դարի սկզբներին Արևմտյան Հայաստանում կազմավորվել էին Էրզրումի, Սեբաստիայի, Կարսի, Վանի, Դիարբեքիրի, Ախալցխայի, Բայազետի վարչական միավորումները[30]:

XVIII-XIX դարերում սկսվեց թուրքական հսկայածավալ կայսրության թուլացման ու քայքայման շրջանը: Փորձելով կանխել երկրի քայքայումն ու թուլացումը՝ 1800-1830 թթ. սուլթանները դիմեցին բարենորոգումների, որտեղ առաջնային դերակատարություն էր վերապահվում վարչական նոր բաժանումներին: Այդ առթիվ առաջին հիշատակություններից մեկը պատկանում է Ղ. Ինճիճյանին: Նա հայտնում է, որ Արևմտյան Հայաստանը բաժանված էր Էրզրումի, Բայազետի, Կարսի, Ախալցխայի, Վանի, Դիարբեքիրի, Սեբաստիայի և Կեսարիայի փաշայությունների: Էրզրումի փաշայությունը կազմում էին Կարինի, Խնուսի, Թեքմանի, Բասենի, Թորթումի, Սպերի, Բաբերդի, Դերջանի, Երզնկայի, Կամախի, Քեշքիթի, Ղուզաջանի սանջակները[31]:

Ռուս-թուրքական 1828-1829, 1853-1856, 1877-1878 թթ. պատերազմները վարչական նոր բաժանումներ պարտադրեցին թուրքական կառավարությանը: Դարասկզբին Բարձր Հայքի կազմում էին Քեմավը, Էրզինճան, Մամախությունը, Գուրուզայը, Հաֆանիաեն, Շեյրազը, Օվաճգը, Լեզքին, Դերջանը, Բայբուրդը, Ձորմելին, Մասսատը, Էրզրումը, Օվանը[32]:

Քղին, Խնուսը, Թորթումը, Կիսկիմը, Շադիրիօվանը, Բասենը, Ալաշկերտը, ընդգրկված էին Չորրորդ Հայքի, Տայքի, Այրարատի կազմում[33]:

Մինչև 1829 թ. նահանգի կազմում էին Կարինի, Վերին և Ներքին Բասենների, Քղիի, Դերջանի, Երզնկայի, Բաբերդի, Սպերի, Թորթումի, նաև Խնուսի, Կելկեթի, Շաբին Կարահիսարի գավառները, կամ՝ «...գրեթե ամբողջ պատմական Բարձր Հայքը, առանձին գավառներ Այրարատից, Տուրուբերանից, Տայքից, Աղձնիքից, Փոքր Հայքից»[34]:

1864 թ. կազմվեցին Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Վանի վիլայեթները:

---

[29] Նույն տեղում, էջ 65:
[30] Նույն տեղում, էջ 58, 282, 309-384:
[31] Ղ. Ինճիճեան, Մաս Ա, էջ 11-112:
[32] Հուշիկք Հայաստանի, մաս Գ, Ա տարի. Պոլիս, 1919, էջ 60:
[33] Նույն տեղում:
[34] Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 28-29:

1868 թ. մեկ այլ աղբյուրի հաղորդմամբ Էրզրումի նահանգն ուներ հետևյալ սանջակները.՝ Էրզրումի, Էրզիջանի, Մուշի, Չլդիի, Արդահանի, Ղարսի, Բայազետի, Վանի, Հեքյարի[35]:

1876 թ. Կարինի նահանգը բաժանվեց Կարինի Վանի, Հեքյարի, Բաղեշի, Դերսիմի, Կարսի, Չըլդրի վիլայեթների: Այնուհետև Սան Ստեֆանոյի պայմանագրով Կարսն ու Չըլդրը միացվեցին Ռուսաստանին, իսկ Արևմտյան Հայաստանի մնացած տարածքը բաժանվեց Կարինի, Խարբերդի, Դերսիմի, Բաղեշի, Վանի, Հեքիարի, Սեբաստիայի, Տիգրանակերտի, վիլայեթների[36]:

1880, 1888 թթ. կատարվեցին մի քանի փոփոխություններ, և Կարինի նահանգի որոշ գավառներ հայտնվեցին հարևան վիլայեթներում: 1897 թ. Արևմտյան Հայաստանի վարչական նոր բաժանման արդյունքում Կարինի նահանգի կազմ ընդգրկվեցին երեք՝ Կարինի, Երզնկայի և Բայազետի գավառները: Կարինի գավառի կազմում էին Կարինի, Բաբերդի, Բասենի, Քղիի, Դերջանի, Կիսկիմի, Թորթումի, Սպերի, Նամրվանի Խնուսի գավառամասերը, Երզնկայի՝ Երզնկա, Կամախ Սիֆային, Ղուռուշաց Բոլոմեր, Բայազետի՝ Բայազետ, Դիադին, Կարաքիլիսա, Ալաշկերտ, Այնթապ գավառամասերը[37]:

1876 թ. Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սվազի վիլայեթները մնացին անփոփոխ մինչև 1917-1918 թթ.: Վիլայեթներից ամենամեծը Էրզրումի վիլայեթն էր, որն ուներ երեք սանջակ՝ Էրզրումի, Բայազետի, Երզնկայի: Այն միաժամանակ սերասկյարի՝ Թուրքիայի արևելյան զորամիավորումների գլխավոր հրամանատարի բանակատեղին էր:

Էյալեթները /ապա վիլայեթներ/ բաժանվում էին սանջակների/լիվա, գավառ/, սանջակները՝ գավառակների /կազաներ/, կազաները՝ գյուղախմբերի կամ գյուղական համայնքների /նահիեներ/:

Ա-Դոյի վիճակագրությամբ, XIX դարում Կարինի սանջակի կազմում էին Կարնո, Բասենի, Խնուսի, Դերջանի, Թորթումի, Կիսկիմի, Բայբուրդի, Սպերի, Քղիի գավառակները: Սանջակի 9 գավառակներն ունեին 1574 գյուղ[38]:

Երզնկայի սանջակն ուներ 5 գավառակ՝ Երզնկայի, Կամախի, Կերճանիսի, Գուգշանի, Ղուրուչայի, որոնք ունեին 538 գյուղ:

Բայազետի սանջակն ուներ 5 գավառակ՝ Բայազետի, Դիադինի, Կարաքիլիսեի, Ալաշկերտի, Դութաղի՝ 531 գյուղ:

1859 թ. տվյալներով նահանգի բնակչությունը կազմում էր 646.000, որից 135.000-ը /20,89 %/ հայեր էին: Նահանգի քաղաքների 93.000 բնակիչներից 20.000-ը /21,5 %/ հայեր էին[39]:

---

[35] Оттоменская империя, СПБ, 1868, էջ 207:

[36] Гипсиус А.И., Статические таблицы виплатов Турецкой Империи Тифлис, 1880, էջ 11-14:

[37] Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց 1903, Կ.Պոլիս, էջ 187:

[38] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 6:

[39] Չորմիսյան Լ., նշվ. աշխ., էջ 106:

Նահանգի երեք սանջակների 27 գավառակների 389 գյուղերում և 9 քաղաքներում ապրում էին 159.593 հայեր, 23.413 տուն: 1891 թ. նահանգում ապրում էին 259.593 հայեր, որոնցից 89.934-ը՝ Կարնո, 34.510-ը՝ Երզնկայի, 134.949-ը՝ Բայազետի սանջակներում[40]:

Վիճարկելով Լ. Չորմիսյանի ու 1896 թ. թուրքական խեղաթյուրված վիճակագրության տվյալները՝ Ա-Դոն հայտնում է, որ դրանք հայերի թիվը 15-20 տոկոսով պակաս են ներկայացնում[41]:

Գ. Սրվանձտյանցի հաշվումներով 1878 թ. նահանգի Կարնո, Դերջանի, Բայազետի, Ալաշկերտի, Կիսկիմի, Բասենի գավառակներում ապրում էին 159.000 հայեր, այդ թվում՝ 18.000-ը Բասենի, 12.000-ը՝ Դերջանի, 6.500-ը՝ Կամախի, 13.000-ական՝ Ալաշկերտի և Բայազետի, 2.000-ը՝ Կիսկիմի գավառակներում, 31.000-ը՝ Ալաշկերտ քաղաքում[42]:

Այդ տարիներին Թուրքիայի բնակչությունը կազմում էր 11.005.000 մարդ, որից 1.281.900-ը, այսինքն՝ երկրի ընդհանուր բնակչության 10, քաղաքային բնակչության 20 տոկոսը հայեր էին: Այստեղ ևս հայերի թիվը քիչ է ներկայացված, որովհետև Բեռլինի կոնգրես հղած վիճակագրության համաձայն՝ հայերի թիվը 1.330.000 էր, որը, մեր կարծիքով, հավատընծայելի վկայություն չէ:

Հատկանշական է այն փաստը, որ չնայած հայկական նահանգներում պարբերաբար կրկնվող վարչական փոփոխություններին, որոնց հիմնական նպատակը գերակշիռ հայ բնակչություն ունեցող շրջանների ուծացումն էր, կառավարությանը չհաջողվեց իրականացնել իր ծրագիրը, և Կարինի նահանգի հայաշատ գավառներ Բասենում, Խնուսում, Դերջանում, Կամախում, Բաբերդում, Ալաշկերտում մահմեդականության համար չապահովեց քանակական գերակշռություն:

Երրորդ գլխի Ա ենթագլխում /«Կարինի գավառի ժողովրդագրությունը XIX դարի երկրորդ կեսին»/ անդրադարձել ենք նահանգի կենտրոն Կարին քաղաքի պատմությանը, բնակչության կազմին, արվեստներին, մշակութային, կրթական խնդիրներին, ազատագրական շարժումներին, գավառի գյուղերի պատմությանը, տեղագրությանը, ժողովրդագրական հարցերին, հայ բնակչության զբաղվածությանը, կրթական ու եկեղեցական, մշակութային առանձնահատկություններին, և որպես ընդհանրացում կազմել գավառի, գյուղերի, գավառակների ժողովրդագրությունը ամփոփող աղյուսակներ:

---

[40] Ա-Դո, նշվ. աշխ., էջ 226, 236-237:
[41] Նույն տեղում, էջ 224:
[42] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, գ. 23, թ. 16-19:

Կարինի նահանգի, Կարինի գավառակի հայ բնակչության աճի և նվազման ընթացքը XIX դարի երկրորդ կեսին և 1894-1896 թթ. կոտորածներից հետո* **

Գավառ, գավառակ	1850	1870	1879	1881	1884-85	1888-90	1894-96 կոտորած
Կարինի գավառ-296 հայաբնակ գյուղ, 32086 տուն, 19948 հայ բնակչություն, 16184 մահմեդական բնակչություն							
Կարինի գավառակ-57հայաբնակ գյուղ, 6957 տուն, 33990 հայ բնակչություն, 10297 մահմեդական բնակչություն							
Կարին քաղ.	15000		31000	30800	10435		5000
Մուտուրկա			700		420		
Սովուք Ջերմուկ			200		235		
Շխնոց			258/280		175		
Թուանճ			350		280		
Հինձք			700		490		
Գզլքիլիսե			230		140		
Շեփեկ			300		35		
Դինարգոմ							
Ձիթհող			1150		490		
Արծաթի			500		350	560	
Ումուտում			150		350	525	
Կրիճք			590		280		
Կրճկնոց			210		105	300	
Գեղախոռ			250		245	550	
Դվնիկ			500		280		
Պատիշեն			310		210		
Երկնիստ			90		35		
Ըղտաձոր			350		245		
Գոմք			270		140	350	
Օձնի	1150		1350				
Ղարարգ				420	682	700	
Աշկալա		382			800		
Ճինիս		240		140		297	
Երկան Մանսուր		40		42		133	
Իլիճա	330	380				210	
Բլուր		140		140	280	236	
Արշունի		200	242	105	140	227	
Չիվթլիկ		1300	1337				
Կան		2060	2400	1400	500	2242	
Կեզ		800				776	
Հինարի գոմ		300					
Սալաձոր		120					
Վարարշ.	950						
Ապրնտնտի		200					
Թիթկեր		75					
Քարահասան		400					
Թոփալ Զավուշ		150					
Ջիվորջիկ		1300					
Մյոտյուլիկ		200					
Սոկուտլու		160					
Մնկառիչ		150					
Յոչպեկ		80					
Ընձիկ		50					
Օրթլի		25					
Վերին գեղ		18					
Ղայափա		60					
Ղուշչի		15					
Խնտեմելիք		16					

Ղարա Հասան		**407**					
Գալբիլիսե		**30**					
Խաչկավանք		**14**					
Թարքունի		**75**					
Նորաշեն		**240**					
Մեզրե		**280**					
Ճինիս		**65**					
Ճիպոտ		**50**					
Վեբեխաս		**35**					

* Այս և հետագա բոլոր ցուցակների սկզբնաղբյուրները նշված են շարադրանքի տողատակերում:

** Հետագա բոլոր աղյուսակները կազմված են նույն սկզբունքով, համապատասխան գավառի, գավառակի նույն տարեթվերի ցուցանիշներով:

Կարինի նահանգում, ըստ դավանանքի, ազգաբնակչության աճը 1870-1873 թթ.[43]

	մահմեդական	քրիստոնյա
1870	86901	29687
1871	91061	25961
1872	93459	28552
1873	99691	29916
Բայազետի գավառում		
1874	22175	11319
1875	25028	11980

Աղյուսակները հաստատում են, որ Օսմանյան կայսրությունում իրականացվում էր քրիստոնյաների հալածման, գաղթելու պարտադրանքի, կրոնափոխության քաղաքականություն, որի արդյունքում 1870-1873թթ. մահմեդականությունը Կարինի նահանգում աճել է 127,90 շնչով, քրիստոնյաները՝ 771 շնչով: Իսկ Բայազետի գավառում, միայն երկու տարում՝ 1874-1875թթ., մահմեդականությունն աճել է 2853, քրիստոնյաները՝ 670 շնչով:

Նմանօրինակ աղյուսակներ ենք կազմել նաև Բաբերդ, Բասեն, Դերջան, Թորթում, Խնուս, Կիսկիմ, Սպեր, Քղի գավառակների, Բայազետի գավառի Բայազետ, Ալաշկերտ, Դիադին, Դուքաղ, Կարաքիլիսա, Երզնկայի գավառի Երզնկայի, Գուրուչայի, Կերճանիսի, Կամախի գավառակների, 17 քաղաքների ու ավանների, 409 գյուղերի, Կարինի նահանգի հայ և մահմեդական բնակչության քանակի, ըստ դավանանքի մահմեդական և քրիստոնյա բնակչության աճի տեմպերի վերաբերյալ:

Մեր ստացած վերջնական արդյունքը չափազանցություն չէ, ընդհակառակը, ինչ-որ չափով նվազագույն ցուցանիշ է նաև, քանզի նահանգի հայաբնակ, անունները փոխած, կեսկեսներով բնակեցված գյուղերի մասին տեղեկություններն իսպառ բացակայում են, կամ դրանք ներկայացված են չափազանց թերի:

Հիշենք նաև, որ մեր հաշվումներն ընդհանուրի միջինի արտահայտություններն են միայն:

Բերված աղյուսակներն ու դրանց լրացումները պատկերացում են տալիս նահանգի բնակչության աճի ու նվազման ընթացքի, յուրաքանչյուր գյուղի, գավառակի, գավառի և ամբողջությամբ նահանգի հայության գոյապայքարի պատմության մասին: Աղյուսակների բովանդակությունը, լինելով դժնդակ կացության արտահայտությունը, չեն շեղվում իրականությունից և հենվելով առկա փաստերի վրա՝ ավելի են հաստատում շարադրանքի ընթացքում առաջ քաշած տեսակետները, ապացուցում ընդհանրացումների ճշմարտացիությունը:

[43] ՀԱԱ,ֆ.476, ց. 1,գ. 131, թ. 26:

Բաբերդ քաղաքը 1474-1870 թթ.՝ 396 տարում, որևէ աճ չի ունեցել: Ավելի պարզ՝ 1474 թ. քաղաքն ունեցել է 175 տուն, 1.500 ընտանիք[44], 1830-50 թթ.՝ 13.000 շունչ բնակչություն, որից 8.000-ը՝ հայ, 1870 թ. ունեցել է 1.823 շունչ հայ բնակչություն[45]: Այսինքն՝ հայերի քանակը նվազել է ավելի քան 6.000 շնչով:

Դիադին քաղաքը XIX դարի առաջին կեսին ուներ 500 տուն խառը բնակչություն:

1880 թ. քաղաքն ուներ 80 տուն խառը բնակչություն (40 տուն, 280 շունչ)[46]: 1909 թ. քաղաքում ապրում էին 15 տուն հայեր[47]: Ընդունենք կեսի տարբերակը՝ 250 տուն, 1.750 շունչ հայ բնակչություն[48]: Այստեղից էլ՝ 102 տարվա ընթացքում՝ 1807-1909 թթ., հայերի թիվը կրճատվել է 1.645 շնչով (250 – 15 = 235, 1750 – 105 = 1645):

Երզնկայի գավառի Մեղուցիկ գյուղը մինչև 1895-96 թթ. կոտորածն ուներ 1.700 բնակիչ, Երկանը՝ 1.000, Մահմուտցիկը՝ 1.500, Գյուլի են՝ 2.000, Մթննին՝ 1.750: Կոտորածներից նշված գյուղերից փրկվել են ընդամենը 34 հայ: Այսինքն՝ միայն 5 մեծ գյուղերում կոտորվել է 7.862 շունչ բնակչություն[49]:

Ավելին, արխիվային նույն փաստաթուղթը հայտնում է, որ գավառի 30 գյուղերի 15.064 շունչ հայ բնակչությունից փրկվել են 206 մարդ, այսինքն՝ կոտորվել է 19.558 շունչ հայ բնակչություն[50]:

Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ 1881 թ. նահանգն ունեցել է 333.476[51], 1882 թ.՝ 280.000 շունչ հայ բնակչություն[52]: Այսինքն՝ միայն մեկ տարում հայ բնակչությունը նվազել է 53.476 շնչով: Կարելի՞ է ընդունել այս ցուցանիշը: Անշուշտ, որովհետև Օսմանյան կայսրությունում 1887թ. կար 530.000 կրոնափոխված քրիստոնյա[53]: Նահանգում նույնպես գործում էին եվրոպացի քարոզիչներ, որոնք, անկասկած, հասել էին հաջողությունների և բնակչության նշված քանակից ունեին իրենց բաժինը:

1870-1873 թթ., ըստ դավանանքի, նահանգում բնակչության աճի ընթացքն այսպիսին է. մահմեդականներն աճել են 12.790, քրիստոնյաները՝ 299 շնչով: Բայազետի գավառակում, 1874-75 թթ., համապատասխանաբար՝ 2.853 և 661 շնչով[54]:

---

[44] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 352:
[45] ՏԲ, հ. 2, էջ 527:
[46] Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 270:
[47] ՏԲ, հ. 2, էջ 973:
[48] ԳԱԹ, նշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:
[49] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 164, թ. 11:
[50] Նույն տեղում:
[51] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 332, թ. 9:
[52] Նույն տեղում, գ. 2341, թ. 1:
[53] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 131, թ. 26:
[54] ԲԵՀ, 1963, թիվ 2, էջ 105:

Եթե այս ցուցանիշը տարածենք ամբողջ 1850-1915 թթ. վրա, ապա մեր ստացած հաշվարկները ոչ թե միջինի, այլ նվազագույնի արդյունք են, որովհետև, ինչպես վկայում է մեկ այլ փաստաթուղթ, 1877-1912 թթ. նահանգում կոտորվել է 341.000, արտաքսվել՝ 437.760 հայ[55]: Կամ, եթե մինչև 1914 թ. Արևմտյան Հայաստանում 1 կմ քառ.-ու վրա ապրում էր 13 մարդ, ապա 1914 թ. հետո՝ 9,4 մարդ[56]:

Մեր հաշվարկների նկատմամբ վստահություն է ներշնչում նաև 1878 թ. Կ. Պոլսի պատրիարքարանի կազմած վիճակագրությունը, որի համաձայն՝ Էրզրումի, Վանի, Բաղեշի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի նահանգներում ապրում էին 1.630.000, այդ թվում՝ Էրզրումի նահանգում՝ 280.000 հայեր[57], որը կազմում էր Արևմտյան Հայաստանի հայ բնակչության 17-18 տոկոսը:

1882-1912թթ. հայերի քանակը նվազել է 56.000-ով, հայտնում է փաստաթղթերից մեկը[58]: Եթե բնակչության նշված քանակից հանենք 1894-96 թթ. ջարդերի զոհերի թիվը (300.000 կամ 341.000), ապա կստանանք արտագաղթածների և կրոնափոխվածների քանակը՝ 260.000 կամ 219.000: Եթե ընդունենք, որ 1878-1912 թթ. արտագաղթել են 150.000 մարդ, կստանանք նաև կրոնափոխվածների քանակը՝ 150.000 կամ 69.000 շունչ:

Գիտենք, որ 1830-78 թթ. նահանգից արտագաղթել են 9.000 ընտանիք հայեր. մեկ տունը նվազագույնը 7 շնչով հաշվելով անգամ՝ արտագաղթածների թիվը կկազմի 63.000 շունչ: Այսպիսով, որպեսզի հաշվենք համիդյան կոտորածների հետևանքով նահանգի հայության կորուստները, պետք է կատարենք համեմատական վերլուծություն: Ընդունված է, որ հիշյալ ջարդերին Արևմտյան Հայաստանում զոհ է գնացել 300.000 հայ: Յովի. Լեփսիուսը թերահավատ է այս քանակի նկատմամբ և պնդում է, որ զոհերի թիվը պետք է հաշվել 500.000[59]: Նշված տարիներին նահանգի հայ բնակչությունը կազմում էր Արևմտյան Հայաստանի հայ բնակչության (1.630.000) 17,1 տոկոսը՝ 280.000 շունչ:

300.000 կոտորվածները կազմում էին արևմտահայ բնակչության 16,447 տոկոսը, որտեղից էլ կարող ենք ստանալ նահանգում կոտորվածների քանակը:

1895 թ. ներառյալ նահանգն ուներ 315.280 շունչ բնակչություն, որի 16,533 տոկոսը կազմում է 51,533 շունչ: Այսինքն՝ նահանգում 1894-1896 թթ. կոտորվել է 51.533 շունչ հայ:

Մեր հաշվարկներով 1878-95 թթ. Կարինի նահանգում կար 272.202 հայ ազգաբնակչություն: Կատարելով նույն հաշվարկը՝ կստանանք զոհերի քանակը՝ 44.769 (272.202 – 16,447 =44.769): Կատարված հաշվումների, հատկապես

---

[55] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 28, թ. 8:

[56] Նույն տեղում, գ. 131, թ. 32:

[57] Նույն տեղում:

[58] Братская помощь…, Москва, 1898, էջ 23:

[59] Նույն տեղում:

Կարինի նահանգի հատվածի նկատմամբ կասկածը վերացնելու նպատակով բերենք մի քանի վկայություններ. նահանգի Բաբերդի գավառակում 1895-96 թթ. 165 գյուղ ավերվել է, բնակչությունը՝ կոտորվել: Այսինքն՝ թեև մենք շարադրանքում ընդունել ենք գավառակում 30 հայաբնակ գյուղ, սակայն բերված փաստաթուղթը վկայում է, որ գավառակի 165 գյուղում եղել է հայ բնակչություն: Դրանք հայաբնակ, անունները փոխված կամ օսմանլի կոչված գյուղերն էին, որոնք ընդունել էին մահմեդականություն, բայց շարունակում էին հայեցի կենցաղը, պահպանում դավանանքը: Թորդանում ավերվել է 40, Բասենում՝ 14, Օվայում (Կարինի գավառակում – Հ. Ձ.)՝ 23, Քղիում՝ 9, Բայազետի գավառակում՝ 24 գյուղ[60], որոնց բնակչությունը կոտորվել է: 110 գյուղ միայն 6 գավառակում: Եթե յուրաքանչյուր գյուղում նվազագույնն ընդունենք 30 ընտանիք, ապա դրանց բնակչությունը կկազմի 23.100 (110 x 30 = 3.300 տուն x 7 = 23.100): Շարունակենք աղբյուրների հաղորդումները: Հայտնվում է, որ միայն Կարին քաղաքում կոտորվել է 5.000 հայ, Դերջանի գավառակի 20.000 հայ բնակչությունից ազատվել է 95 շունչ[61], Բայազետ քաղաքի 300 տուն հայ բնակչությունից՝ 100 հոգի[62] :Այստեղից էլ միայն հայտնի փաստերի գումարում ունենում ենք 50.005 շունչ կոտորված (23.100+ 5.000 + 19905 + 2.000 = 50.005):

Հաշվարկները համոզում են, որ ուշադրության է արժանի զոհերի քանակը 500.000 ընդունող վկայությունը, քանզի նույն աղբյուրը հայտնում է նաև, որ կոտորվել է 2.600 քաղաքների ու գյուղերի բնակչություն, 559 գյուղ ընդունել է մահմեդականություն, սպանվել է 179 գյուղի քահանա, 328 եկեղեցի վերածվել է մզկիթի, 546.000 կին, ծեր, երեխա մնացել են առանց խնամակալի[63]: Այսինքն, եթե 2.600 քաղաքներից ու գյուղերից յուրաքանչյուրում ընդունենք 30 տուն հայ բնակչություն, յուրաքանչյուր տան անդամների նվազագույն թիվը՝ 7, կստանանք նույն թիվը՝ 2.600 x 30 =78.000 տուն x 7= 546.000: Զոհերի՝ ընդունելի համարվող 300.000 թիվը խիստ կասկածելի է, ինչը ցույց է տալիս նաև ստորև ներկայացվող հաշվարկը:

1895-1915 թթ. նույն բնական աճի ընթացքով, հանած համիդյան կոտորածների զոհերի քանակը (300.000), կունենանք հետևյալ պատկերը. 1895 թ.՝ 313.320, 1914 թ.՝ 261.807, այսինքն՝ 20 տարում 0,7 տոկոս աճը կազմում է 298.439:

Այս ամենը պարզ հաշվարկի պայմաններում: Նախ՝ հաշվենք մինչև 1895 թ. և 1895 թ. ներառյալ, 0,7 տոկոս բնական աճի ընթացքով, բնակչության քանակը. մինչև 1895 թ.՝ 313.320, 1914 թ.՝ 357.184, 1895 թ. ներառյալ՝ 315.280, 1914 թ.՝ 359.419:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

---

[60] Братская помощь…, Москва, 1898, էջ 136:
[61] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 738:
[62] Братская помощь…, Москва, 1898, էջ 23:
[63] Նույն տեղում, էջ 136 :

XIX դարի երկրորդ կեսին Թուրքիան աղմկոտ անցյալի ծաղրանկար էր: Օգտվելով կայսրության տնտեսական հետամնացությունից՝ եվրոպական տերությունները Թուրքիան վերածեցին կիսագաղութի: Իսկ երբ բորբոքվեց «Արևելյան հարցը», երբ մեկը մյուսի հետևից բռնապետության դեմ ազատագրական պայքարի ելան նվաճված ժողովուրդները, Թուրքիան կարծես թևակոխում էր մասնատման, ապա և կործանման ժամանակաշրջանը : Հսկայածավալ կայսրությունը փլուզումից փրկելու ուրիշ ելք չտեսնելով՝ սուլթանները քայքայման ընթացքը դանդաղեցնելու, ռազմական հզորությունը վերականգնելու, ֆեոդալական մասնատվածությունը հաղթահարելու համար դիմեցին բարենորոգումների: Սակայն բարենորոգումները հազվադեպ բացառությամբ մնացին թղթի վրա, ավելին՝ հետադեմ մահմեդական գաղափարախոսությունը, հոգևորականությունը, խոշոր հողատերերը, կառավարությունը և առաջին հերթին սուլթանը կատաղի դիմադրություն կազմակերպեցին, և բարեփոխումներ խոստացող թանզիմաթներն ու սահմանադրությունը տեղ չգտան կյանքում: Բարենորոգումների տապալմանն էին ձգտում նաև եվրոպական տերություններն ու Ռուսաստանը, որովհետև նրանց շահերին դեմ էր Թուրքիայի վերակենդանացումը:

Կարինի նահանգում, ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներում, իրենց անարգել, դաժան քաղաքականությունն էին շարունակում, Չարենցի խոսքերով ասած՝ «հավիտենական հիվանդի թափթփուկ հորդաները»՝ քրդերն ու թուրքական խուժանը:

Հարկային քաղաքականությունը, կատարելով իր հիմնական դերը՝ հայության տնտեսական կարողությունները ոչնչացնելու պարտականությունը, հնարավորություն էր ստեղծում նաև «Նոր օսմանների» հիմնական նպատակի իրագործման համար: Երկրի մահմեդականացումը մի միջոցառում էր, որը հնարավորություն կտար խուսափելու եվրոպական միջամտությունից և չիրկիզվող պահարան նետելու Արևելյան հարցի պատմության արյունոտ էջը՝ Հայկական հարցը:

XIX դարի երկրորդ կեսը նշանավորվեց արևմտահայության տեսանելի տեղաշարժերով, որի առաջին վկայությունը սահմանադրական շարժումն էր: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Ղրիմի պատերազմից հետո Թուրքիան իր գոյությունն ապացուցում էր անուժ հրովարտակներ հրապարակելով: Անժամանակ արևմտահայության դեմ բացահայտ պայքար հայտարարելով՝ սուլթանն ու Բ.Դուռը երկրի դեմոկրատացումն ապացուցող թանզիմաթների արանքում տեղ տվեցին նաև արևմտահայ սահմանադրությանը, որը գործադրվելու իրավական հնարավորությունից զուրկ մի կանոնադրություն էր: Այն ժամանակաշրջանի առաջավոր գործիչներից մեկը՝ Մ. Խրիմյանը, անվանում էր Կ.Պոլսի համայնքի սահմանադրություն, որում բացակայում էին գավառահայությանն իրավունքներ արտոնող բառերը: Ահա թե ինչու, Հ.

Աճառյանի բնորոշմամբ, սահմանադրությունը «ազգին մեկ մասեն սպասված ընդունելությունը չգտավ»[64]:

Բեռլինի կոնգրեսից հետո սաստկացող հալածանքներին դիմադրելու նպատակով ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Կարինի նահանգում ստեղծվեցին ընկերություններ ու կազմակերպություններ, որոնց մեջ «իր որոյն տեղն ուներ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը»: «Պաշտպան հայրենյացը» այն բոցավառվող խարույկն էր, որի շուրջը համախմբվեց ազատատենչ արևմտահայության ազատագրական ողջ միտքը: Կազմակերպությունը շրջադարձային նշանակություն ունեցավ արևմտահայության ազատագրության գաղափարախոսության ձևավորման գործընթացի վրա: Դա մի ժամանակահատված էր, երբ եվրոպական դիվանագիտությունից խաբված ժողովրդի մեջ հասունանում էր սեփական ուժերով ազատագրության հասնելու գաղափարը:

Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմից հետո սուլթանական կլիկը եկավ այն համոզման, որ դարեր շարունակ կրկնվող հալածանքները չկոտրեցին հայության դիմադրությունը: Մնում էր վերջին միջոցը՝ կոտորածների իրականացումը՝ զուլումի քաղաքականության իրագործումը, որտեղ առաջին ջութակի դերը կատարելու էին քրդերը:

Անսանձ քրդական հորդաներն ավերեցին Արևմտյան Հայաստանի գյուղերն ու ավանները, հայաթափ արեցին քաղաքները: Հայ ժողովուրդը մեծ ճիգերի գնով դիմադրում էր: Սակայն ուժերն անհավասար էին, բնաջնջումն իրականացնողները՝ բիրտ ու անագորույն: «Քրդերը համիդիե են, սուլթանի ծառաները: Այդպես վարվելը նրանց իրավունքն է»՝ բողոքներին պատասխանում էին տեղական իշխանությունների ներկայացուցիչները[65]:

XIX դարի երկրորդ կեսը Կարինի նահանգի հայության ծանր ժամանակահատվածներից էր: Կրելով «հավիտենական հիվանդի» հայաջինջ քաղաքականության դաժան հարվածները՝ կարինահայությունը ոտք էր դնում առավել բախտորոշ մի հարյուրամյակ, երբ հարցականի տակ էր դրվելու իր ֆիզիկական գոյության խնդիրը:

Ընդհանրացնելով ատենախոսության բովանդակությունը՝ հանգել ենք այն եզրակացության, որ նահանգի ժողովրդագրության փոփոխությունների վրա մեծ ազդեցություն ունեին.

Ա. Տնտեսական հալածանքները, որի պայմաններում արևմտահայությունը, ընկնելով դժոխային կացության մեջ, ֆիզիկական գոյության պահպանության համար դիմում էր գաղթի կամ ուծացման տարբերակներին:

Բ. Քաղաքական անկրելի վիճակը, անձի գույքի անապահով կացությունը, կրթության, մշակույթի նկատմամբ իշխանությունների թշնամական քաղաքականությունը ստիպում էին մոռացության մատնել ազգայինը, հայկականը, և

---

[64] Սվաճյան Հ., Հրապարակախոսություն, էջ 301:

[65] Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 333:

արևմտահայությունը կանգնում էր օսմանիզմի քաղաքականության զոհերի շարքում:

Գ. Պարտադրված կրոնափոխությունը, եվրոպացի քարոզիչների նկատմամբ պետական հովանավորչությունը ունենում էին այն արդյունքը, որ տարեցտարի արևմտահայության նորանոր խմբեր հեռանում էին ազգային կյանքից, խարխլվում էր հայության հոգեկան, քաղաքական միասնությունը, մեծանում էր ձուլման հավանականությունը, դյուրացվում էր օսմանլի ազգի ձևավորման գործընթացը:

Դ. Թուրքացման քաղաքականությանը մեծապես նպաստում էին XVI դարից գործադրության ընդունված, պետականորեն իրականացվող արշավանքները դեպի Արևմտյան Հայաստան, որոնք ղեկավարում էին պետական բարձրաստիճան պաշտոնյաներն ու կրոնական առաջնորդները: Այդ արշավանքների արդյունքում ասպարեզից վերանում էին հարյուրավոր գյուղեր, հայրենի բնակավայրերը դառնում էին քոչվորական ցեղերի բնակատեղի, հայ բնակչությունը բռնի կրոնափոխվում էր:

Ե. Ժողովրդագրության փոփոխության գործում նշանակալի արդյունք էր տալիս հալածանքների, բռնազավթումների տարափների տակ ընկած հայ բնակչությանը հովանավորչության պարտադրումը, երբ գյուղերին, քաղաքներին, ավաններին տեր ճանաչված քուրդ և թուրք բեկերը ժամանակի ընթացքում փոխում էին գյուղերի անունները, իսկ գյուղերի հայ բնակչությունը, առերես ընդունելով պարտադրանքը, գաղտնի պահպանում էր իր հավատը, ավանդույթները: Այսպես հանդես եկան կեսկեսներ կոչվածները, որոնք չէին հաշվվում որպես հայեր:

Զ. Բնակչության ազգային կազմի փոփոխության վրա ազդում էին նաև մահմեդականների պետականորեն կազմակերպված ներգաղթերը, երբ գոյության պահպանության միջոցներից զուրկ հարստահարիչների այդ բանակն ուղղվում էր հայկական գյուղերի վրա, որի հետևանքով, ունենալով իշխանությունների հովանավորությունը, գաղթականները տեր էին դառնում հայկական գյուղերին, հայերի ունեցվածքին՝ բնիկներին ստիպելով կամ գաղթել, կամ ընդունել իրենց «հովանավորությունը»:

Է. Ժողովրդագրության փոփոխությունների վրա իրենց կործանիչ ազդեցությունն էին ունենում պարբերաբար կրկնվող բացահայտ-անթաքույց ու գաղտնի կոտորածները:

Ը. Պետական հայաջինջ քաղաքականությանը նպաստում էին նաև հրապարակված բարենորոգումների, 61-րդ հոդվածի իրագործման լծակների բացակայությունը, «հայասեր» եվրոպական տերությունների ու ցարիզմի կողմնակալ քաղաքականությունը, երբ թուրքական հանցագործ վարչակարգերը հնարավորություն էին ստանում անարգել իրականացնելու Արևմտյան Հայաստանը հայաթափելու պետական ծրագիրը:

Թ. Հիմնահարցի խորացման վրա իր բաժին ազդեցությունն ունեցավ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, երբ արշավող ու նահանջող թուրքական

բանակի բիրտ հարվածներից ոչնչացան բազմաթիվ հայկական բնակավայրեր ու գյուղեր:

Ժ. Հայակուլ պետական քաղաքականության դեմ պայքարելու նպատակով, բարեգործականի անվան տակ գործող հայկական կազմակերպությունները, միություններն ու ընկերությունները, քաղաքական կուսակցություններն անկարող եղան ծավալելու լիարժեք գործունեություն, որի պատճառով արևմտահայությունը զրկվեց ինքնապաշտպանության, հայակործան քաղաքականությանը դիմադրելու հնարավորությունից:

Ժողովրդագրական փոփոխությունների հիմնական պատճառ համարվող նշված գործոններից յուրաքանչյուրի ուսումնասիրությունն ու վերլուծությունը հրատապ անհրաժեշտություն են Արևմտյան Հայաստանի, արևմտահայության պատմության առանցքային խնդիրների պարզաբանման համար: Ինչպես ընդգծում է Ա. Մելքոնյանը. «…գիտական ու քաղաքական, պատմական խոշոր նշանակություն ունեցող այս հիմնախնդիրները մեծագույն նշանակություն ունեն պարզաբանելու, պատասխան տալու այն հարցին, թե թուրքական դժնդակ տիրապետության շրջանում հայ ժողովուրդը ինչպես է դարեր շարունակ ենթարկվել բռնի ազգաձուլման, կրոնափոխության, արտագաղթի և, ի վերջո, Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում վերածվել է բնակչության փոքրամասնության…»[66]:

Բարդ ու աշխատատար մի խնդիր, որի ակունքները գտնելու համար, թուրքական կեղծարարությունը, հայահալած քաղաքականությունը վեր հանելու համար պետք է անդրադարձ կատարենք պատմության խորքերը: Օսմանյան կայսրությունում վարչական բաժանումների, տեղանունների, ժողովրդագրության սոցիալ-տնտեսական վիճակի մասին զգալի տեղեկություններ կան աշխարհագիր մատյաններում (դավթարներ), որոնց հիմնական նպատակը հարկային քաղաքականությունն էր: Մատյանները, ֆինանսական ժողովրդագրություն լինելով հանդերձ, պարունակում էին նաև պատմաժողովրդագրական, հայրենագիտական գնահատելի տեղեկություններ: Մատյանների ուսումնասիրությունը սկսվել է XX դարի սկզբներին, և բնական է, որ թե՛ թուրքական պատմագիտական, թե՛ լեզվագիտական ընկերությունները, թե՛ 1942 թ. ձևավորված հատուկ հանձնաժողովը, նկատի ունենալով Թուրքիայի պատմության անցյալը, նվաճված տարածքների ու ժողովուրդների պատմության նկատմամբ եվրոպացի ուսումնասիրողների հետաքրքրությունները, մատյանները հակաթուրքական տրամադրություններից հեռու պահելու, եվրոպական դիվանագիտությանը փաստական տեղեկություններից զրկելու նպատակով սկսեցին կեղծումները, մատյանների անհասանելիության ապահովումը:

---

[66] Մելքոնյան Ա., Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր, Հայկական լեռնաշխարհը հայ էթնոսի բնօրրան հայագիտական գիտաժողովի նյութերի ժողովածու, տե՛ս Առաջաբանը, Երևան, 2004, էջ 6:

Արևմտյան Հայաստանի տնտեսական ու քաղաքական կացության հարցերը տեղ են գտել նաև XVI-XIX դարերում կազմված սուլթանական դիվանում, որոնք հայտնի էին «Կարևոր փաստաթղթերի դավթարներ» անունով:

Արևմտյան Հայաստանի առումով XVI դարում կազմված աշխարհագիր մատյաններն ունեն նաև պատմաժողովրդագրական, հարկերի, տուրքերի, ազգաբնակչության կազմի, զբաղմունքի վերաբերյալ արժեքավոր վկայություններ:

Ֆինանսական վիճակագրությունը կազմվում էր կայսրության ֆինանսական գերատեսչության միջոցով և պահպանվում էր գաղտնի: Նույն ժամանակահատվածում էլ կազմվել են գրանցման մատյանները՝ սալնամենները, որոնք բաժանվում էին երկու մասի՝ ընդարձակ և համառոտ և օգտագործվում էին ըստ պահանջի ու անհրաժեշտության:

Դժբախտաբար հիշատակված փաստաթղթերը (մատյանները, տարեցույցները) թեև հասանելի են, սակայն այնպիսի «մշակման» են ենթարկվել, որ այնտեղից հնարավոր չէ դուրս բերել Արևմտյան Հայաստանի մասին անհրաժեշտ տեղեկություններ: Նրանց կեղծված և հրապարակված օրինակները զուտ քաղաքական նշանակության, ժողովրդավարական շղարշով պատված նյութեր են:

Ահա թե ինչու ներկայացվող ատենախոսությունն այդ բացն ինչ-որ չափով լրացնելու հավակնություն ունի:

Ատենախոսության ուսումնասիրությունն արդիական է, այժմեական այն առումով, որ փորձ է արվում պարզաբանելու Արևմտյան Հայաստանի հայաշատ Կարինի նահանգի հայ բնակչության թվաքանակը, նրա աճի ու նվազման գործընթացը, ինչը լրացուցիչ ներդրում է Հայոց ցեղասպանության, հատկապես 1894-1915թթ. ժամանակահատվածի բնակչության կորստի պարզաբանման առթիվ, հակահարված է տալիս թուրք այժմյան պատմագիտության՝ կառավարության՝ արևմտահայերի թվաքանակի նվազեցման, հայերին ոչ բնիկ ճանաչելու պնդումներին:

XIX դարի երկրորդ կեսի թուրքական բռնատիրության վարած հակահայկական քաղաքականությունը հիմնականում ուղղված էր Արևմտյան Հայաստանը հայաթափելու ծրագրի իրականացմանը: Գործադրելով տնտեսական, քաղաքական հալածանքներ, իրականացնելով 1895-1896 թթ., 1915 թ. կոտորածները՝ թուրքական կայսրությանը հաջողվեց պատմական հայրենիքից զրկել արևմտահայության գրեթե 80%-ին՝ իրականացնելով Թուրքիան թուրքերի համար բարբարոսական ծրագիրը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

ա) Մենագրություններ

1. Կարին, Երևան, 1992, էջ 227
2. «Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին», Երևան, 2014, էջ 423

բ) Հոդվածներ

1. Կարինի թատերական ընկերությունը, «Արվեստ», Երևան, 1990, թիվ 4 էջ 45-48:
2. Կարնո նահանգի պատմությունից (XIX դ. երկրորդ կես), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1991, թիվ 1, էջ 71-80:
3. Կարինի բարենորոգումների ծրագիրը (1879), Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1991, թիվ 3 էջ 185-200:
4. Կարինի նահանգի Կամախ գավառակը, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1991, թիվ 1, էջ 133-141:
5. Կարինի նահանգի գավառները (Բասենի գավառ), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2000, թիվ 2, էջ 66-77:
6. Կարինի նահանգի Խնուսի գավառակը (XIX դարի երկրորդ կեսին), Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 2001, թիվ 3էջ 176-180:
7. Կարինի նահանգի Դիադինի գավառակը (XIX դարի երկրորդ կես), Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2002, թիվ 2(160), էջ 87-92:
8. Կարինի (էրզրումի) նահանգի Կարնո գավառակը XIX դարի երկրորդ կեսին, ԵԹԿ պետական ինստիտուտի հանդես, Երևան, 2002, թիվ 1, էջ 61-72:
9. Կարին քաղաքը որպես 19-րդ դարի երկրորդ կեսի 20-րդ դարի սկզբի խոշոր ռազմավարական կենտրոն, «Հայկական բանակ», Երևան, 2002, թիվ 1-2(31- 32), էջ 162-170:
10. Կարինի նահանգի Կարնո գավառակի եկեղեցիները, «Էջմիածին» 2002, թիվ Թ, էջ 42-46:
11. Կարինի նահանգի Բարերդի գավառակի սրբավայրերը, «Էջմիածին», 2002, թիվ Դ, էջ 57-63:
12. Քաղաքական կացության Կարինի նահանգում XIX դարի երկրորդ կեսին, «Նորք», Երևան, 2002, թիվ 4, էջ 165-170:
13. Կարինի նահանգի Քղիի գավառակը XIX դարի երկրորդ կեսին, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2003 թիվ 1, էջ 170-175:
14. Կարինի նահանգի հայ բնակչության, արևմտահայության 1894-1896 թթ. կոտորածների, Մեծ Եղեռնի զոհերի թվաքանակի հարցի շուրջ, «Հայոց

ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Երևան, 2004, թիվ 9, էջ 143-152:
15. Կարինի նահանգի Դերջանի գավառակը XIX դ. երկրոդ կեսին, «Լրաբեր», 2004, թիվ 2(611), էջ 116-124:
16. 1877-1878 թթ. ռուս թուրքական պատերազմի անդրադարձները հայկական հարցի և Կարինի նահանգի վրա, «Բազմավեպ», Վենետիկ, 2014, թիվ 3-4, էջ 201-219:
17. Կարինի նահանգը որպես առևտրական արհեստագործական կենտրոն (XIX դարի երկրորդ կես -XX դարի սկիզբ), «Բազմավեպ», Վենետիկ, 2016, թիվ 1-2, էջ 31-43:
18. XIX դարի երկրորդ կեսին Կարինի նահանգում ժողովրդագրական փոփոխությունների պատճառները, «Կանթեղ», Երևան, 2017, թ. 2 (71), էջ 105-113:
19. Սոցիալ անտեսական հարաբերությունները Կարինի նահանգում 19-րդ դարի երկրորդ կեսին և դրանց ազդեցությունը ժողովրդագրական փոփոխությունների վրա, «Հանդէս Ամսօրեա», թիվ 1-12, Վիեննա, Երևան, 2017, էջ 235-253:
20. Օսմանյան կայսրության հարկային քաղաքականությունը 19-րդ դարի երկրորդ կեսին և նրա ազդեցությունը Կարինի նահանգի ժողովրդագրական փոփոիաությունների վրա, Երնանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, «Հանդես», Երևան, 2017, թիվ 19, էջ 281-285:
21. Ալաշկերտի գավառը XIX դարի երկրորդ կեսին (վարչաժողովրդագրա-կան ուսումնասիրություն), «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2017, թիվ 2, էջ 83-89:

ЗАТИКЯН ОВАНЕС ГЕВОРГОВИЧ
ГУБЕРНИЯ КАРИН (ЭРЗУРУМ) ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 2018 г., 9-ого марта в 14.00 на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной академии наук РА (0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Вторая половина XIX века была решающим периодом в истории Западной Армении. Углубление экономического и политического кризиса в Османской империи изо дня в день, стремления тирании, защиты целостности, жестокие удары агонии падения империи были направлены против подданных христиан.

Социально-экономические и политические изменения, роль диктатора которых взяли на себя европейские державы, вели турецкого режима проводить политику маневрирования, чтобы империя мог избежать становления аппендиксом к европейскому капиталу, а также создавать препятствия - перед достигающих процесса независимости свободолюбивых субъектов. На Ближнем Востоке, который превратился в конфликты интересов, были сконцентрированы также про-армянские и анти-армянские политические, дипломатические начинания, из подтекста которых росли и сформировались программы превращающихся в диктатуру государственной политики.

Если великие державы превращали в рычаг давления на Османской империи корыстную политику защиты христианских подданных, то с обратной силой усугублялись экономические, политические, религиозные преследования, которые в значительной степени способствовали политику решения Армянского вопроса путем погромов. Начиная с XV века турецкая Тирания усыновила политику “защитить мечом - достигнутое мечом”, под ударами лавин которого падали бы особенно христианские подданные.

Смертоносные волны ассимиляции и вероотступничества проглотили густонаселенные армянские провинций губернии Карин. В XVI веке, в 1578 году, после вторжения Лалы Мустафы Паши, мусульманские племена и роды поселились в Байбурте, Спере, Кискиме. В XVII-XIX веках этот процесс был дополнен новыми явлениями, новыми формами преследования. Естественно, что в таких ситуациях изменится демография губернии.

Особенные проявления демографии губернии, анализы распределения населении, миграций, их причины и последствия до конца не изучены. Хотя в 1992 году были опубликованы- мой “Карин”, в 1994 - “Эрзурум” А. Мелконяна, в 2013-

мой “Губерния Карин во второй половине XIX века” монографии[67], однако, сохраняются неосвещенные вопросы в демографической арене губернии, заполнение которого становится необходимостью, потому что, развивая свою антинаучную теорию, турецкая историография доказывает, что “в Западной Армении армян было меньше, и это было выражением доброй воли турецкого народа и государства, что в течение многих столетий шанс на выживание было дано армянам, которые хотели разделить империю”.

Целью диссертации, посвященной демографии губернии Карин, является представление полной картины темы- рассматривая полученные доказательства, архивные документы, мемуары, постарались открыть истину, раскрыть сущность турецкой статистики, повторяя их предвзятые мнения некоторых европейских и российских авторов, поглубже анализировать, сравнить систему административно-политических подразделений губернии, их историко- географическую сущность, уточнить границы губернии, провинций, уездов, территориальный охват, с доступными, историческими, демографическими основами представить информацию о городах, центрах уездов, крупных населенных пунктах, крепостях, замках, церквей, образовательных и культурных учреждений, торговли и ремесле губернии.

Во время работы были использованы такие методы исследования, как: сопоставленные, аналитико-сопоставительные, историко-сравнительные, ретроспективные методы анализа.

Цели исследования предусматривают сопоставление исторических, географических, археологических и других данных и знаний. Именно поэтому мы базируемся на методе сопоставлении (история-география, история-археология, история-архитектура и т. д.).

Благодаря применению аналитического-сравнительного метода было реализовано выявление фактических данных, сбор, координация, обобщение, и, размещая их в пространстве и времени, определение сущности различных явлений. Это позволило полностью анализировать административное деление, территориально-демографические проблемы губернии.

Историко- географические, историко- демографические проблемы губернии Карин в нашей стране еще не были рассмотрены в отдельном и всестороннем изучении, кроме указанных выше монографиях. Территориальные, демографические многочисленные вопросы по-прежнему сохраняют свою актуальность и современность, особенно с точки зрения вопросов, связанных с геноцидом армян осуществленных со второй половины XIX- века (1894-1896), законченных в 1915-1922.

---

[67] Затикян О., Национальный состав Карина. Распределение армян. Крупные деревни. Ереван, 1992, Мелконян А., Эрзурум, Ереван, 1994.

Благодаря использованию историко-сравнительного метода и его историко-генеалогических направлений, стало возможным восстановить и представить социально-географические реалии прошлых веков, показать взаимосвязь между подобных явлений разных народов рожденных в результате развитии обобщения живущих на той же историко-географической территории и сопоставимость одновременно формированных явлений среди разных народов.

Применение ретроспективного метода анализа, которое позволяет восстановить отдельные явления с подтверждением обратной связи, на основе источников информации более позднего периода, позволило уточнить ряд историко-географических, важных вопросов, от которых составлены 42 таблицы, которые дают представление о губернии, провинций, уездах, численности армянского населения, занятости, образовательных и культурных учреждений.

Мы составляли две новые отдельные таблицы по количеству, росту армянских и мусульманских населений, и почти отвечаем на вопросы демографического характера, которые, являясь научными инновациями, еще содержат и значительные материалы по историко-сравнительным, историко-географическим аспектам, в сфере демографических нерешенных вопросов губернии.

Эти таблицы и их дополнения дают представление о росте и процессе упадка населения губернии, о каждой селе, уезде, провинции, и в целом об истории выживания армян губернии. Содержания таблиц, являясь выражением невыносимого состояния, не отклоняются от реальности, и, опираясь на имеющиеся факты, более подтверждают мнения, высказанные в письменной форме, доказывают правдивость обобщения.

На демографические изменения губернии имели свои влияния экономические угнетения, политическое невыносимое состояние, различные рычаги вероотступничества, неограниченная иммиграция мусульманских племен, отсутствие реформ.

Изучение и анализ каждого из рассмотренных факторов, являющихся основными причинами демографических изменений, являются настоятельной необходимостью для выяснения ключевых вопросов Западной Армении, истории западных армян. Как подчеркивает А. Мелконян, “Эти вопросы, имеющихся научную и политическую, крупную историческую значимость, имеют наибольшее значение для выяснения ответа на вопрос, как на протяжении многих веков, в период турецкого тяжкого владычества, армянский народ подвергалась насильственной национальной ассимиляции, вероотступничества и миграции и, наконец, в ряд провинций Западной Армении превратилась в меньшинство населения”[68].

---

[68] Мелконян А., Исторические вопросы демографии Армении, Армянское нагорье-колыбель армянского этноса, Сборник материалов конференции арменоведения, смотри введение, Ереван, 2004, с. 6.

Исследование диссертации является актуальным, своевременным в том смысле, что предпринимается попытка прояснить число армянского населения Западной Армении, губернии Карин, где живут много армян, процесс роста и упадка, что является дополнительным вкладом в уточнении Геноцида армян, особенно в 1894-1915гг. периода потери населения, наносит ответный удар претензий нынешней историографии- правительства Турции, по основу сокращении числа западных армян, не признания армян как коренного народа.

Антиармянская политика турецкой диктатуры во второй половине XIX века, первой половины XX века была в основном направлена на реализацию программы уничтожения армян из Западной Армении. Применяя экономические, политические гонения, осуществляя погром в 1895-1896, 1915, турецкой империи удалось лишить почти 80% западных армян своих исторических родин, реализуя варварский план “Турция для турок”.

ZATIKYAN HOVHANNES GEVORG

KARIN (ERZURUM) STATE IN THE SECOND HALF OF THE XIX CENTURY

Dissertation for degree of the Doctor of Sciences (History), on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on 2018, march 9, 14.00 at the session of the Specialized Council 004 on Armenian History of SCC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The second half of the XIX century was a decisive period in Western Armenian history. The deepening day by day economic and political crisis in the Ottoman Empire, the aspirations of tyranny existence, integrity protection, cruel blows of the agony fall of the empire were directed against the subject Christians.

The socio-economic and political changes, the role of the dictator of which had assumed the European powers, pushed the Turkish regime to run a maneuvering policy in order the Empire could avoid to become an appendix of the European capital, and create obstacles before the process of achieving independence of freedom-loving subjects.

In the Middle East, turned into the conflicts of interests, were also focused the pro-Armenian and anti-Armenian political, diplomatic undertakings, from the context of which were risen and formed the programs turned into the programs of state tyranny policy.

If the great powers turned the defending venal policy of Christian subjects into the lever of pressure of the Ottoman Empire, then by the reverse power were deepened the economic, political, religious persecutions which greatly promoted the policy of solving the Armenian issue through massacres. From the XV century the Turkish tyranny adopted the policy "to protect with the sword achieved by the sword" under the stream blows of which were going to fall especially the Christian subjects.

The deadly waves of assimilation and apostasy swallowed the provinces of Karin State populated by Armenians. In the XVI century, in 1578, after the invasion of Lala Mustafa Pasha, the Muslim tribes and races settled in Bayburt, Sper, Kiskim and other provinces, a significant number of Armenians became forcibly apostasies. In the XVII-XIX- centuries, that process was supplemented by new phenomena, new forms of persecutions. Naturally, in such conditions the demography of the state would be changed.

The specific manifestations of the state demography, the analysis of population distribution, migration, their causes and consequences are not fully clarified. Though in 1992 my "Karin", in 1994 A. Melkonyan's "Erzurum", in 2013 my "Karin State in the

second half of the XIX century" monographs[69] were published, however, in the sphere of state demography non-elucidative issues are preserved, the supplement of which becomes a necessity, as, developing his anti-scientific theory, the Turkish historiography proves that "in Western Armenia the Armenians were of a small number and it was the expression of good will of the Turkish people and the state that for centuries a chance of survival had been given to the Armenians who wished to disintegrate the empire."

The aim of the dissertation devoted to the demography of Karin State is to present the complete image of the theme by examining the obtained evidence, archival documents, memoirs, we tried to reveal the truth, to discover the essence of Turkish "statistics", biased opinions of European and some Russian authors who repeat it, deeply analyze, combine the state system of administrative-political divisions, their historical-geographical character, to clarify the borders of the state, provinces, cantons, the territorial coverage, present the information about the cities, province centers, towns, fortresses, castles, churches, educational and cultural institutions, shopping, crafts of the state on affordable, historical, demographic basis.

During the work were used such methods as: comparative, analytic-comparative, historical-comparative, retrospective analysis methods.

The study aims envisage a comparison of historical, geographical, archaeological and other data and knowledge. That's why we rely on the comparative method (history-geography, history-archeology, history-architecture, etc.).

Due to the application of analytical-comparative method, was implemented the revelation of facts, their collection, coordination, generalization, and, placing them in time and space, the definition of different phenomena essence. This allowed to completely analyze the administrative division of the state, its territorial-demographic issues.

The historical-geographical, historical-demographic problems of Karin State have not become separate and comprehensive study subjects at us yet, except the above mentioned monographs. Numerous territorial, demographic issues still preserve their modernity and actuality, especially in terms of issues related to the Armenian Genocide implemented from the second half of the XIX- century (1894-1896) and finished in 1922.

Due to the use of the historical - comparative method and its historical-genealogical directions, it became possible to restore and represent the social- geographical realities of the previous centuries, to show the interrelationship between the similar phenomena occurred in the result of generality development of different nations living on the same historical -geographical territory and the comparability of phenomena formed at the same time among different nations.

The use of retrospective analysis method, which allows to restore the separate phenomena by the confirmation of retrospective connection, on the basis of later period

---

[69] Zatikyan H. National staff of Karin. The placement of Armenians. Big villages. Yerevan, 1992, Melkonyan A., Erzurum, Yerevan, 1994.

sources of information has enabled to clarify a number of historical- geographical important issues from which are composed the 42 tables that give an idea about the state, provinces, cantons, the number of Armenian population, their employment, educational and cultural institutions. We have compiled two new separate tables on the number, growth of the Muslim population and almost respond to the questions of demographic character, which, besides being scientific, contain considerable materials on historical-comparative, historical-geographical aspects, in the sphere of demographic, incomplete issues of the state.

These tables and their additions give an idea about the population growth and the decline process of the state, about every village, canton, province, and as a whole about the state Armenians' history of struggle for survival. The content of the tables, being the expression of the dreadful situation, do not deviate from reality, and relying on the available facts, mostly confirm the views put forward during the narration, prove the truthfulness of generalizations.

The economic oppressions, political unbearable condition, various levers of apostasy, unrestricted immigration of Muslim tribes, the absence of reforms had their impact on the state's demographic changes.

Being considered the main reason of demographic changes, the study and analysis of each of the marked factors are an urgent need to clarify the key issues for Western Armenia, the Western Armenian history.

As A. Melkonyan emphasizes:"These issues, having scientific and political, historical great significance, have the greatest importance to clarify, answer the question how the Armenian nation had undergone violent national assimilation, religious conversion, migration, during the period of Turkish dreadful domination and, finally, in a number of provinces of Western Armenia turned into a minority of population"[70].

The dissertation study is topical, actual in the sense that an attempt is made to clarify the number of Armenian population of Karin State in Western Armenia, its process of growth and decline, which is an additional contribution to the Armenian Genocide, especially to the clarification of population loss during the period of 1894-1915; counterblows to the claims of modern Turkish historiography - Turkish government, of reducing the number of Western Armenians, not recognizing Armenians as indigenes.

The anti-Armenian policy of the Turkish dictatorship in the second half of the XIX century- the first half of the XX century was mainly aimed at the implementation of the program of exterminating the Armenians from Western Armenia. Exerting economic, political persecutions, carrying out the Massacres of 1895-1896, 1915, the Turkish Empire managed to deprive almost 80% of Western Armenians of their historical homeland, implementing the barbaric plan "Turkey for Turks".

---

[70] Melkonyan A., Historical Demographic Issues of Armenia, the Armenian Highland as a cradle of Armenian ethnos, Collection of the conference materials of Armenian Studies, see the introduction, Yerevan, 2004, p. 6.